

ՈՐՔԱՐՆ Է ՏԵՎԵԼՈՒ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՂՐԲԵՋԱՆԻ ՍՏԱՏՈՒՄ-ՔՎՈՆ

Ֆեոդոր Լուկյանով – «Россия в глобальной политике» հանդեսի գլխավոր խմբագիր, Ռուսաստանի արտաքին եւ պաշտպանական քաղաքականության խորհրդի անդամ

Վերջին շրջանում Ռուսաստանը համառ փորձեր է կատարում մեռյալ կետից շարժելու Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորումը: Հայաստանի, Ադրբեջանի ու Ռուսաստանի նախագահների վերջին հանդիպումը կայացավ Կազանում եւ ավարտվեց անարդյունավետ: Բանակցությունների արդյունքում Բաքուն ու Երեւանը, ինչպես սովորաբար, միմյանց մեղադրեցին պայմանավորվածությունները խախտելու մեջ, իսկ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հերթական անգամ հիշեցրեց, թե Բաքվի համբերությունն անսահման չէ, եւ պատերազմը, սկզբունքորեն, չի ավարտված: Մեկնաբանները շտապեցին (ով հրճվանքով, ով տխրությամբ) հայտարարել ռուսական միջնորդական ջանքերի տապալման մասին: Սակայն դա անարդարացի գնահատական է:

Ռուսաստանը Դմիտրի Մեդվեդեւի օրոք ղարաբաղյան հարցում փաստորեն գործում է ինքնուրույն, թեպետեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի հավանությանը: Մասամբ, որովհետեւ ձեւաչափի մյուս մասնակիցներն առաջընթացի հույս չունեն եւ գործուն մասնակցությունից առանձնակի շահ չեն տեսնում: Մասամբ էլ այն պատճառով, որ Մոսկվան, անշուշտ, անհամեմատ ավելի շատ է հետաքրքրված կանխատեսելի զարգացման մեջ, քան Փարիզը կամ Վաշինգտոնը: Ղարաբաղի շուրջ ռազմական ճգնաժամը, որի ուրվականը պարբերաբար հայտնվում է բանավեճերում, Մոսկվային դնում է ծանր կացության մեջ:

Ռուսաստանը Հայաստանի հանդեպ ունի ֆորմալ պարտավորություններ՝ որպես ՀԱՊԿ դաշնակցի, սակայն, նախեւառաջ, երկկողմանի համաձայնագրերի հիման վրա, որոնք նախորդ տարի գործնականում անժամկետ երկարացվեցին: Միջպետական հակամարտության դեպքում Ռուսաստանին հարկ է լինելու պաշտպանել Երեւանին, եթե չի ցանկանում վերջնականապես եւ անդառնալիորեն կորցնել հուսալի գործըն-

կերոջ համբավը: Սակայն, միաժամանակ, Մոսկվան գիտակցում է Ադրբեջանի աճող կարեւորությունը՝ որպես Հարավային Կովկասի եւ Փոքր Ասիայի էներգետիկ (իսկ դա նշանակում է՝ նաեւ աշխարհաքաղաքական) առումով առանցքային երկիր: Այնպես որ, Ռուսաստանը պարզապես իրեն չի կարող թույլ տալ քանդել հարաբերությունները Բաքվի հետ: Այլ բառերով՝ Կրեմլը չպետք է թույլ տա այնպիսի իրավիճակ, որտեղ իրեն հարկ լինի ընտրություն կատարել:

Ուստի, մոտեցումը լիովին հասկանալի է՝ պահպանել կողմերի միջեւ երկխոսությունը՝ թույլ չտալու համար նրանց օտարումը, ինչպես նաեւ նպաստել ռազմական հավասարակշռության պահպանմանը, որն ինքնին խաղաղության ամրապնդման գործոն է:

Այս տողերի հեղինակին վերջերս վիճակվեց լինել եւ Բաքվում, եւ Երեւանում. եզրակացությունն այն է, որ առկա պայմաններում հավասարակշռության պահպանումը միակ հնարավոր ու ճիշտ մարտավարությունն է: Ինձ չհաջողվեց հայտնաբերել ոչ մի հետք, որ կողմերը պատրաստ են ինչ-որ իրական զիջումների կամ փոխզիջումների, որոնք դուրս կգային բանավոր խուսաճավման եւ ձեւակերպումների հղկման շրջանակներից: (Ի դեպ, վերջինս նույնպես մեծ դժվարությամբ է հաջողվում. կողմերը, որոնք ներգրավված են մշտապես մխացող հակամարտության մեջ, լավ են հասկանում բառերի արժեքը):

Ադրբեջանում Ղարաբաղի վերադարձման նպատակը բարձրացված է գրեթե ազգային գաղափարի աստիճանի, ինչպես, օրինակ, Քաշմիրը Պակիստանի համար: Քանի որ երկիրը նավթի արտահանումից հսկայական եկամուտներ է ստանում եւ բուռն զարգանում է, նրա ինքնավստահությունն աճում է: Դրան գումարվում է նաեւ ընդհանրապես հայերի նկատմամբ կասկածամիտ վերաբերմունքը, որը 90-ական թվականների սկզբի իրադարձություններից հեռանալուն համեմատ՝ չի թուլանում, այլ ընդհակառակը՝ ստանում է ինստիտուցիոնալ բնույթ:

Հայաստանում, այդ նույն ժամանակ, լիովին բացակայում է ադրբեջանական կողմի նկատմամբ վստահությունը: Սակայն գերակայում է հստակ պատկերացումը, թե ռազմաստրատեգիական ոլորտում ցանկացած զիջում կհանգեցնի դիրքերի կտրուկ թուլացման, զսպման ու երաշխիքների ողջ համակարգի փլուզման (որը ձեւավորվել է դիմակայության գոտում 90-ականներին) եւ անխուսափելի պատերազմի: Ուստի, ընդհանրապես ոչինչ չի կարելի հանձնել:

Զիջումներ հնարավոր չեն նաեւ այն պատճառով, որ երկու կողմի առաջնորդները բավարար ուժեղ չեն, որպեսզի թույլատրեն իրենց

ժողովրդականությունը չվայելող գործողություններ: Թեև Իլհամ Ալիևը վերահսկում է իրավիճակն Ադրբեջանում, վերջինիս հեղինակությունն, անշուշտ, զիջում է նրան, որ վայելում էր իր հայրը: Յեղար Ալիևը, հավանաբար, կարող էր մաներելու համար իրեն առավել մեծ տարածություն թույլ տալ: Չայաստանում իրադրությունն էլ ավելի բարդ է, քանզի քաղաքական միջավայրն այնտեղ բավական բազմակարծիք է, ներկայացված են շահերի զանազան խմբեր, այդ թվում նաև արտաքին (սփյուռքը): Փոխզիջման փորձն ընդունակ է հանգեցնելու խիստ սրված ներքին ճգնաժամի, իսկ Ղարաբաղի կորուստը՝ քաղաքացիական պատերազմի եւ հայկական պետականության անկման:

Այս համատեքստում ստատուս-քվոյի ամրապնդմանն ուղղված ռուսական դիրքորոշումը միանգամայն արդյունավետ է եւ այսօր այլընտրանք չունի:

Կողմերը գիտակցում են այն ռիսկերը, որոնք կապված են ստեղծված դրությունն ուժով փոխելու փորձի հետ: Այսպես, Ադրբեջանը, որը նավթային գերշահույթները հաջողությամբ ներդնում է ոչ միայն ռազմական շինարարության, այլեւ ենթակառուցվածքների մեջ եւ փորձում է դիվերսիֆիկացնել տնտեսությունը, անշուշտ, թանկ է գնահատում ձեռքբերումները եւ, առանց ուժային գործողության հաջողության երաշխիքի, այդ ամենը չի դնի խաղատախտակին: Իսկ ներկայիս պայմաններում երաշխիքներ չեն կարող լինել: Առկա իրավիճակի պահպանմամբ առավել շահագրգռված է Չայաստանը, որի համար անգամ հանուն Ղարաբաղի հաջող պատերազմը հղի է իսկական տնտեսական աղետով եւ ավելի խուլ շրջափակմամբ, քան այժմ: Թեկուզեւ այն պատճառով, որ Վրաստանը, որի հետ Չայաստանի սահմանն այժմ բաց է, արդեն գտնվում է Ադրբեջանից լուրջ տնտեսական կախվածության մեջ:

Կա մի հանգամանք, որն ընդունակ է հանգեցնել քաղաքական լանդշաֆտի արմատական վերածեւման: Դա ուժեղ արտաքին շոկն է, որի ալիքները գլորվում են ողջ տարածաշրջանով: Օրինակ, միջագային մասշտաբային ճգնաժամը՝ կապված Չայաստանի եւ Ադրբեջանի հարեւան Իրանի հետ, որը կարեւորագույն դեր է խաղում (թեւեւ շատ տարբեր) երկու երկրների համար: Եթե պատկերացնենք, որ ԱՄՆ-ը կամ Իսրայելը որոշեն, թե այլեւս հապաղել չի կարելի եւ Թեհրանին պետք է կանգնեցնել միջուկային զենք ձեռք բերելու ճանապարհին, ապա այդ իրադարձությունից առաջացած անկանխատեսելի աշխարհաքաղաքական էֆեկտը կարող է ամեն ինչ խառնել եւ պայմաններ ստեղծել այլ զարգացման համար՝ հատկապես հաշվի առնելով Իրանում ադրբեջա-

նական զգալի փոքրամասնությունը: Մյուս տարբերակը կարող է լինել Հյուսիսային Աֆրիկայի եւ Մերձավոր Արեւելքի սոցիալ-քաղաքական անկայունությունների տարածումն այն երկրներ, որոնք սկզբունքային դեր են խաղում Հարավային Կովկասի համար՝ նույն Իրան, Թուրքիա (ինչը քիչ հավանական է), կամ Բաշար Ասադի սիրիական վարչակարգի անկումը: Վերջին դեպքում հնարավոր է տարածաշրջանային անկայունության աճ եւ, օրինակ, հայ փախստականների արտահոսք քաղաքացիական պատերազմով բռնկված Սիրիայից:

Բոլոր այս սցենարներն առայժմ ենթադրական են, եթե ոչ երեւակայական, սակայն ոչ միայն վերջին տարիներին, այլեւ ամիսներին մենք այնքան շատ բան տեսանք, որ չէինք կարող նույնիսկ նախօրեին ենթադրել:

inosmi.ru

05.07.2011

**ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ
ՈՒԾԱՑԱԾ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.**

ԴԻԱՐՔԵՔԻՐ

Ռուբեն Մելքոնյան

Նախկինում հայահոծ Դիարբեքիր քաղաքն այսօր էլ բավական ուշագրավ տեղ ունի Թուրքիայում՝ էթնիկ ինքնության հարցի զարգացման համատեքստում: Ներկայումս առավելապես քրդերով բնակեցված քաղաքում, որը ոչ պաշտոնապես համարվում է քրդական մայրաքաղաք, ըստ տարբեր աղբյուրների՝ բնակվում են բռնի իսլամացված հայության ուծացած սերունդներ: Դեռևս 1894-96թթ. համիդյան կոտորածների ժամանակ Դիարբեքիրում բռնի կրոնափոխության են ենթարկվել շուրջ 25 հազար հայեր: Գիշտ է, նրանց մի մասն ավելի ուշ վերադարձել է քրիստոնեության, սակայն որոշակի հատված շարունակել է ապրել մուսուլմանի քողի ներքո: 1915-ի Հայոց ցեղասպանության տարիներին եւս Դիարբեքիրում տեղի է ունեցել որոշ թվով հայերի բռնի կրոնափոխություն, որը հետագայում ավարտվել է քրդացմամբ: Տարբեր աղբյուրներում հանդիպում ենք փաստերի, որ այսօր էլ Դիարբեքիրում մուսուլման հասարակությունը հստակ տարբերակում է կրոնափոխված հայերի սերունդներին՝ նրանց համար կիրառելով «ֆիլա» (հայ) եզրը:

Վերջին ժամանակներս Թուրքիայում ընթացող էթնիկ ինքնության հետ կապված գործընթացները բավական ակտիվ դրսեւորվում են նաեւ Դիարբեքիրում: Հիշենք, որ Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու վերաբացումից հետո հենց դիարբեքիրցի մի քանի ընտանիք ինքնաբացահայտվեցին՝ հայտարարելով, որ հայ են եւ ցանկություն հայտնեցին վերամկրտվել որպես հայ քրիստոնյաներ: Ներկայումս էլ ընթանում են Դիարբեքիրում գտնվող Մերձավոր Արեւելքի ամենամեծ հայկական եկեղեցու՝ Սուրբ Կիրակոսի վերակառուցման աշխատանքները, որին բացահայտ աջակցում է Դիարբեքիրի քուրդ քաղաքապետը, որը հայտնի է հայերի մասին իր դրական հայտարարություններով: Այս ամենը որոշակի ազդակ է ծառայում, որպեսզի ընդդիմադիր քրդերով բնակեցված քաղաքում ապրող կրոնափոխված հայերի սերունդներն առավել հաճախ հայտարարեն իրենց մասին:

Մի քանի տարի առաջ Երեւանում Դիարբեքիրից գիտաժողովի մասնակցելու համար ժամանած քրդուհին մեզ հետ անձնական զրույցում

խոստովանել էր իր հայկական ծագման մասին: Նրա պատմությունը, ինչպես ինքը փոխանցեց, տիպական է դիարբեքիրցի շատ կրոնափոխ հայերի ընտանիքների համար, որում համոզվեցինք հետագա ուսումնասիրությունների ժամանակ: Հայկական ծագումով քրդուհին մասնավորապես նշել էր. «*Ես միշտ գիտեի, որ իմ հայրական պապը հայ է: Մենք բոլորս գիտեինք, սակայն չէինք խոսում: Նա, իհարկե, չէր կարող ապրել որպես հայ եւ ներկայանում էր որպես քուրդ: Ոչ մեկի հետ հայերեն չէր խոսում, բայց երբ իրեն հարց էինք ուղղում, երբեմն պատասխանը հայերեն էր տալիս*»: Ուշագրավ է, որ պապն իր ընտանիքին մանրամասն պատմել է Հայոց ցեղասպանության մասին՝ պատգամելով. «*Սա այնպիսի ցավ է, որ 100 տարի էլ անցնի՝ չի սպիանա*»:

Վերջին շրջանում դիարբեքիրցի կրոնափոխ հայերը համարձակություն են ունենում նաեւ թուրքական մամուլում հայտարարել իրենց մասին եւ էթնիկ ինքնության շուրջ քննարկումներն ակտիվացնել նոր հարցադրումներով: Թուրքական հայտնի «*Radikal*» թերթում վերջերս տպագրվել էր դիարբեքիրցի մի ծպտյալ հայի պատմություն: Ներկայումս Ստամբուլում բնակվող Մարի Էսքիջին պատմում է Դիարբեքիրում իրենց կենսակերպի առանձին կողմերի մասին. «*Հաճախ հարկադրված ենք եղել մուսուլմանի պես ապրել: Մեզ պես հարյուրավոր հայ ընտանիքներ էլ ձեւացրել են, թե իբր մուսուլման են: Աղոթելու եւ խաչակնքվելու համար իջնում էինք տան նկուղը*»: Նրա պատմածներից պարզ է դառնում, որ կրոնափոխ հայերը երբեմն պահպանել են նաեւ հայերեն լեզուն եւ իրար հետ շփվել մայրենիով: Այսօր կարող ենք հանդիպել բազմաթիվ փաստերի, վկայությունների, որոնք ապացուցում են, որ Հայոց ցեղասպանությունից հետո արդեն հանրապետական Թուրքիայում գոյատևած հայության բեկորները նաեւ 20-րդ դարի կեսին են ենթարկվել բռնի կրոնափոխության:

Հետաքրքիր է նկատել, որ ավելի վաղ՝ 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին կրոնափոխված հայերը խնդիրներ են ունեցել արդեն 1950-ականներին իսլամ ընդունած հայերի հետ, եւ եղել է փոխադարձ անվստահության մթնոլորտ: Այս ամենում կարելու էր է խաղացել համատարած վախի մթնոլորտը Թուրքիայում, սակայն ինչպես Մարի Էսքիջին է նկատում, տարբեր ժամանակաշրջաններում կրոնափոխված հայերի համար փոխադարձ անվստահության շարժառիթներից է եղել նաեւ հետեւյալ հարցադրումը. «*Իսկ եթե իրոք մուսուլման է դարձե՞լ*»: Էսքիջին փոխանցում է նաեւ, որ դիարբեքիրցի կրոնափոխ հայերը խնդիրներ են ունեցել նաեւ Ստամբուլի հայ համայնքի հետ. մասնավորապես՝ տեղափոխվելով Ստամբուլ՝ նրանք որպես քուրդ են ընկալվել

տեղի հայերի կողմից եւ անգամ չեն կարողացել իրենց երեխաներին կրթության տալ հայկական դպրոցներում:

Վերջին օրերին թուրքական հեղինակավոր *“Hurriyet Daily News”* անգլիալեզու օրաթերթում տպագրվեց հայազգի լրագրող Վերջիհան Ջիֆլիօղլուի հետաքրքրաշարժ հոդվածը, որի «գլխավոր հերոսը» կրկին դիարբեքիրցի կրոնափոխ հայ է: Դիարբեքիրում բնակվող Գյաֆուր Թուրքալը թերթի հետ զրույցում բացահայտ հայտարարում է. *«Ես սուլննի մուսուլման եմ, բայց հայ եմ»*: Գյաֆուրի հայրը եղել է հավատացյալ մուսուլման, անգամ գնացել է ուխտի Մեքքա, իսկ իր երեխաներին դաստիարակել է որպես սուլննի մուսուլմաններ: Այս ամենով հանդերձ, տասնհինգ տարեկանում Գյաֆուրին հայտնել են, որ իրենք իրականում հայ են, իսկ իրենց ազգանունը Օհանյան է: Ինքնության երկվությունը, ինչպես միշտ է պատահում, բազմաթիվ հոգեբանական խնդիրներ եւ հարցականներ է առաջացրել Գյաֆուրի մեջ, եւ այսօր նա եկել է հետեւյալ հանգուցալուծման. *«Ես ապրում եմ որպես մուսուլման, սակայն իմ արմատները եւ մշակույթը չեն ժխտում: Կրոնը կարելուր չէ, սակայն ես ցանկանում եմ իմանալ եւ տիրապետել իմ մայրենի լեզվին»*: Գյաֆուրի կարծիքով՝ հայկական ինքնությունը պետք է կառուցվի էթնիկ պատկանելության շուրջ, այլ ոչ թե կրոնի: Գյաֆուրը նաեւ ավելացնում է, որ իրենք, այսինքն՝ Դիարբեքիրում բնակվող կրոնափոխ հայերի սերունդները, ճանաչում են իրար եւ համապատասխան շփումներ ունեն: Սակայն խոսելով քրիստոնյա հայերի հետ իրենց շփումների մասին՝ նա կարծիք է հայտնում, որ կա փոխընկալման խնդիր, ավելին. *«Քրիստոնյա հայերն արհամարհում են մեզ, կարծես՝ մենք ենք այս վիճակը նախընտրել»*:

Նկատենք, որ դիարբեքիրցիները հայտնվել են յուրահատուկ վիճակում՝ շրջապատված համատարած անվստահությամբ. քրդերի համար նրանք շարունակում են մնալ հայ, թուրքական պետության համար՝ անվստահելի կրոնափոխներ, իսկ քրիստոնյա հայերի համար՝ օտար քուրդ:

Ընթացող զարգացումները նորանոր փաստեր եւ հարցադրումներ են ի հայտ բերում, սակայն, միեւնույն ժամանակ, ցույց տալիս կրոնափոխ հայերի խնդրում եղած բազմաթիվ ընդհանրություններն ու կոնկրետ միջավայրով պայմանավորված տարբերությունները, որոնք կարելուր են ուսումնասիրությունների ճիշտ ուղղորդման համար:

ՀԵՏՆՏՐԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ **Հայկ Գաբրիելյան**

2011 թվականի հունիսի 12-ին Թուրքիայում տեղի ունեցան հերթական խորհրդարանական ընտրությունները, որոնց մասնակցում էին երկրի 15 կուսակցությունները ներկայացնող 7492 թեկնածուներ եւ 203 անկախ թեկնածուներ: Հիմնական պայքարն ընթացավ իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցության (ԱԶԿ), գլխավոր ընդդիմադիր ուժ, քեմալական ուղղությունը ներկայացնող ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) եւ Ազգայնական շարժում կուսակցության (ԱՇԿ), ինչպես նաեւ քրդական խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցության (ԽԺԿ) միջեւ: Վերջինս ընտրությունների ժամանակ հանդես եկավ անկախ թեկնածուների տեսքով՝ հետագայում խորհրդարանական խմբակցություն ձեւավորելու հեռանկարով: Դրա պատճառն այն էր, որ ԽԺԿ-ն չէր կարող հաղթահարել խորհրդարան մուտք գործելու համար սահմանված 10%-անոց նախընտրական շեմը, ինչն ամենաբարձր ցուցանիշն է ԵԽ-ի անդամ 47 երկրներում:

Ընտրությունների արդյունքում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) 550 մանդատներից 327-ը բաժին ընկավ ԱԶԿ-ին, 135-ը՝ ԺՀԿ-ին, 53-ը՝ ԱՇԿ-ին, իսկ 35-ը՝ անկախ թեկնածուներին: 2007 թվականի հուլիսի 22-ի վաղաժամ ընտրությունների համեմատ՝ այս անգամ ԱԶԿ-ն հավաքեց 3.17%-ով ավելի քվե, սակայն նրա խորհրդարանական մանդատների քանակը նվազեց 14-ով, ԺՀԿ-ի քվեներն աճեցին 5.13%-ով եւ 23 մանդատով, ԱՇԿ-ն 1.23%-ի եւ 18 մանդատի անկում ունեցավ, իսկ անկախ թեկնածուները 1.33%-ի եւ 9 մանդատի աճ արձանագրեցին:

Հատկանշական է, որ ԱԶԿ-ն հաղթել է 81 նահանգներից 66-ում, այդ թվում նաեւ Ստամբուլում ու Անկարայում: Ընդ որում, ԱԶԿ-ին հաջողվել է 12 նահանգներում 100%-ով ստանալ բոլոր պատգամավորական մանդատները: Այս անգամ որոշակիորեն նվազել է քրդաբնակ շրջաններում ԱԶԿ-ի ստացած աջակցությունը, ինչի պատճառը վերջին շրջանում քրդերի հանդեպ ԱԶԿ-ի վարած կոշտ քաղաքականությունն է: Սակայն արեւելյան շրջանների կորուստները փոխհատուցվել են արեւմտյան շրջաններում գրանցած աճով: ԱԶԿ-ին չի հաջողվել որեւէ պատգամավորական մանդատ ստանալ քրդաբնակ Հաքքարի եւ Թուրքի (նախկին

Դերսիմ), ինչպես նաև ադրբեջանաբնակ Իգդիրի նահանգներում: Վերջին դեպքը շատ է զայրացրել Էրդողանին:

ԺՅԿ-ին հաջողվել է հաղթել միայն 8 նահանգներում: Խոսքը Թուրքիայի եվրոպական հատվածի եւ Էգեյան ծովին հարակից 7 նահանգների (Իզմիր) մասին է, ուր ԺՅԿ-ն ավանդաբար ուժեղ դիրքեր ունի: Բացի այդ, ԺՅԿ-ն հաղթել է արեւելյան Թուրքիայի նահանգում, ինչը պայմանավորված է նրանով, որ այնտեղից է սերում ԺՅԿ նախագահ Քեմալ Բըլլըջդարօղլուն: ԱՇԿ-ին հաջողվել է հաղթել միայն Յայաստանին սահմանակից եւ ադրբեջանական մեծ բնակչություն ունեցող Իգդիրում, ուր գերիշխում են հակահայկական տրամադրությունները: Անկախ թեկնածուները հաղթել են հարավարեւելյան քրդաբնակ 7 նահանգներում:

Աչքի է զարնում այն, որ ԹԱՄԺ-ն այս անգամ ավելի երիտասարդ կազմ ունի. առաջին անգամ խորհրդարան անցնելու հնարավորություն են ստացել 25 տարին բոլորած անձինք (նախկինում որպես պատգամավորական նվազագույն տարիք էր սահմանված 30-ը): Բացի այդ, ԹԱՄԺ-ում հայտնվել են 349 նոր պատգամավորներ:

Այսպիսով, ԱԶԿ-ին հաջողվեց 3-րդ անգամ անընդմեջ (03.11.2002 – 34.28% եւ 363 մանդատ, 22.07.2007 – 46.66% եւ 341 մանդատ, 12.06.2011 – 49.83% եւ 327 մանդատ) հաղթել խորհրդարանական ընտրություններում, ինչը բրիտանական The Economist պարբերականն անվանեց «հեթ-տրիկ»: Ուշագրավ է, որ ԱԶԿ-ն, ամեն անգամ տոկոսային առումով բարելավելով իր ցուցանիշը, մանդատների քանակի աստիճանական կորուստ է կրել: Դա պայմանավորված է նրանով, թե տվյալ դեպքում ընտրողները որչափ են իրենց քվեն տվել այն կուսակցություններին, որոնք չեն կարողացել հաղթահարել նախընտրական 10%-անոց շեմը. 2007 թվականին «կորել» էր ընտրողների քվեների միայն 13%-ը, մինչդեռ 2002 թվականին այդ ցուցանիշը կազմել էր 43%:

ԱԶԿ-ի ներկայիս հաղթանակը նշանակում է, որ այն առնվազն եւս 4 տարի պետք է ղեկավարի Թուրքիան, ինչը 1946 թվականին բազմակուսակցական համակարգի ներդրումից հետո կհանդիսանա ռեկորդային ցուցանիշ: Դրան կարող է խանգարել միայն հնարավոր ռազմական հեղաշրջումը, սակայն դրա հավանականությունն օրեցօր ավելի է նվազում՝ հաշվի առնելով այն, որ Թուրքիայի Հանրապետության (ԹՀ) հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի կողմից կանխորոշված երկրի աշխարհիկ ռեժիմի հիմնական պահապաններ հանդիսացող զինվորականներն աստիճանաբար զիջում են իրենց դիրքերը:

Ընթացիկ ընտրություններում ԺՅԿ-ի որոշակի հաջողությունը վկայում է նախորդ տարվա մայիսին սեռական սկանդալի պատճառով

հրաժարական տված ԺՅԿ նախկին նախագահ Դենիզ Բայբալին փոխարինած Քենալ Քըլըչդարոլուի վարած ճիշտ քաղաքականության մասին: Վերջինս իրականացրել է մի շարք ներկուսակցական բարեփոխումներ՝ ընտրություններին ներկայանալով նոր գաղափարներով ու նոր թիմով: Նման տենպի պահպանման դեպքում ԺՅԿ-ն հետագա ընտրություններում կարող է լուրջ մրցակից հանդիսանալ ԱԶԿ-ի համար:

Ինչ վերաբերում է ԱՇԿ-ին, ապա թեև ընտրություններից առաջ նրա վերնախավն «ինչ-որ մեկի» (ըստ ԱՇԿ նախագահ Դելեթ Բահչելիի՝ Էրդողանի) թեթև ձեռքով հայտնվել էր սեռական սկանդալների կիզակետում, այնուամենայնիվ, դա նրա համար կործանարար չէղավ, սակայն բացասական հետեւանքներ ունեցավ: ԱՇԿ-ին հաջողվեց հաղթահարել նախընտրական 10%-անոց շեմը եւ պահպանել սեփական ներկայությունը ԹԱՄԺ-ում, սակայն 18 մանդատի կորստյան գնով: Դա խոսում է այն մասին, որ թուրք ազգայնական ընտրազանգվածը, անկախ ամեն ինչից, հավատարիմ մնաց կուսակցությանը եւ տապալեց ԹԱՄԺ-ից ԱՇԿ-ին հեռացնելու շահագրգիռ կողմերի (առաջին հերթին ԱԶԿ-ի) պլանը:

Ընտրություններից առաջ խորհրդարանում 8 ներկայացուցիչ ունեցող ԽԺԿ-ն այս անգամ կարողացավ հասնել առավել նշանակալից հաջողության եւ ԹԱՄԺ-ում մեծացնել իր ներկայությունը: Դա նրան հնարավորություն է ընձեռում առավել մեծ կշիռ ունենալ տարբեր օրինագծերի առաջքաշման ու հաստատման ժամանակ: Ինչպես եւ սպասվում էր, քուրդ անկախ թեկնածուները ԹԱՄԺ-ում ձեւավորեցին 3-րդ ընդդիմադիր խմբակցությունը՝ ԽԺԿ:

Ընտրություններից հետո թուրքական լրատվամիջոցները հայտարարեցին, որ 9 նորընտիր պատգամավորների համար բանտից խորհրդարան տանող ճանապարհն անցնելու է դատարանի միջոցով: Նրանցից 6-ը ներկայացնում են ԽԺԿ-ն, 2-ը՝ ԺՅԿ-ն, 1-ը՝ ԱՇԿ-ն: Նորաթուխ քուրդ պատգամավորները բանտում են հայտնվել քուրդ ահաբեկիչներին աջակցելու մեղադրանքով: Խոսքը Գյուլսերեն Յըլդըրըմի (Մարդին), Սելմա Ըրմաքի ու Ֆայսալ Սարըլըղըզի (Շըրնաք), Հաթիփ Դիջլեի (Դիարբեքիր), Իբրահիմ Այհանի (Շանլըուֆա) եւ Քենալ Աքթաշի (Վան) մասին է: ԺՅԿ-ի դեպքում նրա ներկայացուցիչները՝ լրագրող Մուսթաֆա Բալբայը (Իզմիր) եւ գիտնական ու հասարակական գործիչ Մեհմեթ Հաբերալը (Ձոնգուլդակ), բանտում են հայտնվել «Էրգենեքոն» ահաբեկչական կազմակերպության գործի շրջանակներում, իսկ ԱՇԿ-ի միակ ներկայացուցիչը «Բալոզ»-ի գործով ձերբակալված պաշտոնաթող գեներալ Էնգին Ալանն է (Ստամբուլ):

Հունիսի 23-ին Թուրքիայի Բարձրագույն ընտրական խորհուրդը (YSK) վետո դրեց Հաթիփ Դիջլեի պատգամավորական լիազորությունների վրա՝ իր որոշումը պատճառաբանելով նրանով, որ Դիջլեն ահաբեկչության օգտին քարոզչություն կատարելու համար դատապարտվել է 1 տարի 8 ամիս ժամկետով: YSK-ն գտնում է, որ Դիջլեն պատգամավոր կարող է դառնալ 2014 թվականից ոչ շուտ:

Դա բողոքի մեծ ալիք բարձրացրեց քրդերի շրջանում, որոնք քառասային իրավիճակ առաջացրին Թուրքիայի տարբեր շրջաններում, այդ թվում նաեւ Ստամբուլում: Մյուս քուրդ նորընտիր պատգամավորներն իրենց հերթին սպառնացին բոյկոտել խորհրդարանի աշխատանքները: ԺՀԿ-ն նույնպես սպառնաց վարվել նման կերպ՝ բանտից Բալբայի ու Հաբերալի չազատման դեպքում:

Հունիսի 28-ին ԹԱՄԺ-ը նորընտիր կազմով հավաքվեց առաջին անգամ, տեղի ունեցավ 361 նորընտիր պատգամավորների երդման արարողությունը: ԹԱՄԺ-ի պատմության ընթացքում առաջին անգամ երդման արարողությունն ուղեկցվեց առանց 189 պատգամավորի մասնակցության: Փաստորեն, դրան մասնակցել են միայն ԱԶԿ-ն ու ԱՇԿ-ն: Չնայած ընդհանուր առմամբ ԺՀԿ-ն չմասնակցեց դրան, այնուամենայնիվ, չխախտեց ավանդույթը, եւ ԺՀԿ ներկայացուցիչ Օքթայ Էքչին, ով ԹԱՄԺ ամենատարեց պատգամավորն է, երդում տվեց եւ խորհրդարանի կանոնադրության համաձայն՝ ժամանակավորապես ստանձնեց ԹԱՄԺ խոսնակի պաշտոնը՝ մինչեւ վերջինիս ընտրությունը:

Պետք է նշել, որ ԺՀԿ-ի ու ԽԺԿ-ի խորհրդարանական բոյկոտը չկարողացավ խանգարել ԹԱՄԺ-ի գործունեությանը: ԹԱՄԺ-ի աշխատանքներին մասնակցող ԱԶԿ-ի ու ԱՇԿ-ի մանդատների քանակը (ընդհանուր՝ 380 մանդատ) թույլ էր տալիս ոչ միայն պարզապես գործել, այլեւ օրենքներ ընդունել, ինչի համար պահանջվում է սահմանադրական մեծամասնություն (367 քվե): Փաստորեն, դրա համար ԱԶԿ-ն պարտական է ԱՇԿ-ին, ինչն էլ հարուցել էր ԺՀԿ-ի զայրույթը: ԺՀԿ-ն ու ԱՇԿ-ն սկսեցին միմյանց մեղադրել դավաճանության մեջ: ԱՇԿ նախագահ Դեւլեթ Բահչելիին հասցեագրած իր խոսքում Քըլըչդարօղլուն նշել է. «Ես կարող եմ ասել միայն մեկ բան: Մենք չենք դավաճանում մեր ընկերներին»: Սրանով նա ակնարկեց այն, որ ԱՇԿ-ն պարտավոր էր աջակցել ընդդիմության բոյկոտի որոշումը՝ ելնելով նրանից, որ այդ կուսակցության պատգամավոր Էնգին Ալանը դեռեւս ապօրինաբար պահվում է բանտում: Ի դեպ, վերջինս 1999 թվականին Քենիայում ղեկավարել է թուրքական հատուկչոկատայինների խումբը՝ ձերբակալելով քուրդ առաջնորդ Աբդուլա Օջալանին եւ նրան հասցնելով Թուրքիա:

Սակայն ԱՇԿ-ի վերնախավն անպատասխան չթողեց Քըլըջդարողլուի այդ մեղադրանքը: ԱՇԿ փոխնախագահ Ֆարուք Բալը հայտարարեց. «Այդ արտահայտությունը չի մեծացնում նրա համբավը: Մենք նույնպես համաձայն չենք դատարանի որոշման հետ: Սակայն նման պահվածքով ԺՅԿ-ն դավաճանում է իր 11 միլիոն ընտրողներին»: Իսկ ԱՇԿ վերնախավի մեկ այլ ներկայացուցիչ՝ Օքթայ Վուրալը, իր հերթին նշեց. «Մենք երբեք չենք դավաճանի ո՛չ մեր ընկերներին, ո՛չ էլ ժողովրդի կամքին: Մենք գիտենք, թե ինչպես է անհրաժեշտ ներկայացնել ժողովրդի կամքը»:

Յուլիսի 4-ին տեղի ունեցավ ԹԱՄԺ խոսնակի ընտրությունը: Միայն երրորդ փուլում ԱՇԿ ներկայացուցիչ Ջեմիլ Չիչեքը, հաղթահարելով պահանջվող քվեի շեմը, դարձավ ԹԱՄԺ-ի 25-րդ նախագահ:

Չիչեքն անմիջապես ձեռնամուխ եղավ ընդդիմադիրների բոյկոտի արդյունքում առաջացած խորհրդարանական ճգնաժամի հարթմանը: Յուլիսի 7-ին նա հանդիպումներ ունեցավ Քեմալ Քըլըջդարողլուի եւ քուրդ պատգամավորներ Սըրըր Սաքըքի եւ Յասիփ Քափլանի, իսկ հաջորդ օրը՝ Սելահաթթին Դեմիրթաշի ու Գյուլթան Քըշանաքի հետ: Չիչեքից առաջ էլ խնդրի հարթմամբ ստիպված էր եղել անձամբ զբաղվել Գյուլը, որը հունիսի 30-ին հանդիպել էր Քըլըջդարողլուի, իսկ հաջորդ օրը՝ քողերի ներկայացուցիչներ Շերաֆեդդին Էլչիի եւ Ահմեթ Թյուրքի հետ:

Յուլիսի 6-ին թուրքական «Ձաման» թերթը գրեց. «Նորընտիր պատգամավորների երդման արարողության վերջնաժամկետը սպառվում է հուլիսի 15-ին: Սահմանադրության 84-րդ հոդվածի եւ ԹԱՄԺ-ի ներքին կանոնակարգի 138-րդ հոդվածի համաձայն՝ մեկ ամսվա ընթացքում, առանց հարգելի պատճառի, 5 նստաշրջանից բացակայած պատգամավորները զրկվում են իրենց պատգամավորական լիազորություններից»:

Դա նշանակում էր, որ երդման արարողությունը եւ ԹԱՄԺ-ի առաջին երկու նիստերը բոյկոտած ԺՅԿ-ի եւ ԽԺԿ-ի նորընտիր պատգամավորները պետք է կողմնորոշվեն մինչեւ հուլիսի 15-ը, քանի որ մինչ այդ տեղի են ունենալու ԹԱՄԺ-ի հաջորդ երեք նիստերը: Եթե պատգամավորական լիազորություններից զրկվածների թիվը գերազանցում է ԹԱՄԺ-ի կազմի 5%-ը (28 մանդատ), ապա երեք ամսվա ընթացքում անցկացվում են միջանկյալ ընտրություններ: Այդ դեպքում ԱՇԿ-ին կհաջողվի ստանալ խորհրդարանական մեծամասնություն՝ 367 քվե (2/3-ը)»: Դրա համար էլ պատահական չէր, որ Օջալանը, որը սկզբնական շրջանում ողջունել էր քուրդ պատգամավորների բոյկոտը, հուլիսի 8-ին նրանց կոչ արեց երդում տալ խորհրդարանում:

Հուլիսի 8-ին Չիչեքի հետ ունեցած մոտ 40 րոպեանոց հանդիպումից հետո Երդողանը հայտարարեց, որ խորհրդարանական ճգնաժամը մոտ է ավարտին: Դժվար է կարծել, թե ԺՀԿ-ն ու ԽԺԿ-ն պատրաստ են զրկվել խորհրդարանում ներկայացված լինելուց եւ միջանկյալ ընտրությունների միջոցով ԱԶԿ-ին սեփական ուժերով ցանկացած օրինագիծ հաստատելու հնարավորություն ընձեռել:

Ինչ վերաբերում է կառավարությանը, ապա հունիսի 14-ին վերջին անգամ հավաքվեց Երդողանի գլխավորած թուրքական 60-րդ կառավարությունը: Նույնը օրը Չանքայա նախագահական նստավայրում Աբդուլա Գյուլն Երդողանից ընդունեց 60-րդ կառավարության հրաժարականը՝ հանձնարարելով ձեւավորել նոր կառավարություն: Վերջինս (61-րդ կառավարությունը) ներկայացվեց հուլիսի 6-ին: Այն շատ չէր տարբերվում նախորդ կազմից. դրանում հայտնվել էին 6 նոր անուններ, իսկ 3 նախարարներ էլ փոխատեղում էին կատարել: Փոխվարչապետեր դարձան Բյուլենթ Արընչը, Ալի Բաբաջանը, Բեշիր Աթալայը եւ Բեքիր Բոզդաղը:

Հուլիսի սկզբին Երդողանը խորհրդարանում ներկայացված բոլոր ուժերին եւ երկրի հասարակական կազմակերպություններին կոչ արեց համատեղ աշխատել նոր Սահմանադրության մշակման վրա. «Եթե մենք զանք կոնսենսուսի, ԱՇԿ-ի հետ հանգեմք միացյալ կարծիքի, ապա կիրականացնենք նոր Սահմանադրության մշակմանն առնչվող մեր բոլոր պարտականությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր երկրում ամենախոշոր ընդդիմադիր ուժը ԺՀԿ-ն է՝ մենք շատ ենք ցանկանում, որ այդ կուսակցությունն էլ ներգրավվի այս գործընթացում: Դա շատ կարեւոր է ժողովրդավարական խորհրդարանական համակարգի զարգացման տեսանկյունից»:

Ի դեպ, ընտրություններից առաջ բազմիցս խոսվել է, թե Երդողանն ընտրություններից հետո փոխելու է 1980 թվականի սեպտեմբերի 12-ին ԹՀ պատմության ընթացքում ամենաարյունալի ռազմական հեղաշրջման արդյունքում՝ 1982 թվականի նոյեմբերի 7-ին, ընդունված Սահմանադրությունը, Թուրքիան անցում է կատարելու ամերիկյան կամ ֆրանսիական օրինակով նախագահական համակարգին (երբ նախագահն առավել մեծ լիազորություններ կունենա), իսկ Երդողանը դառնալու է նախագահ:

Սակայն խորհրդարանական ընտրություններից օրեր անց թուրք պատմաբան Թարհան Էրգենը հայտարարեց, որ Երդողանը չի փորձելու նախագահ դառնալ. «2012 թվականին (գարուն) կայանալիք նախագահական ընտրություններին մնացել է ընդամենը մեկ տարի: Դա շատ սեղմ

ժամկետ է՝ Սահմանադրությունում նախագահական համակարգի մասին ուղղումներ մտցնելու համար: Միեւնույն ժամանակ, 2015 թվականին կայանալիք խորհրդարանական ընտրությունների համար Երդողանը չի կարող առաջադրել սեփական թեկնածությունը, քանի որ ԱԶԿ կանոնադրությունն արգելում է երեք անգամից ավելի դառնալ պատգամավոր: Երդողանին պետք չէ նախագահությունը, նա ցանկանում է պատմության մեջ մտնել որպես «Քրդական հարցը» լուծած քաղաքական գործիչ, ինչից հետո կավարտի իր պատմական առաքելությունը»:

Թարհանի հետ համակարծիք է բրիտանական The Economist պարբերականը. «Երդողանը կարող է կանգնել Քեմալ Աթաթուրքի կողքին: Երդողանը պետք է հրաժարվի ֆրանսիականի նման նախագահական համակարգին անցում կատարելուց: Առավել կենտրոնացված ուժեղ նախագահական համակարգը վատ գաղափար է Թուրքիայի եւ հնարավոր է՝ անընդունելի մնացյալ բոլոր կուսակցությունների համար: Երդողանը պետք է լուծի ամենակարեւոր խնդիրը՝ «Քրդական հարցը», որը 15 միլիոն քրդական բնակչություն ունեցող Թուրքիայի ամենալուրջ հարցն է: Երդողանը 4-րդ անգամ չի կարող առաջադրվել որպես պատգամավորական թեկնածու, դրա համար էլ նշում են, թե նրա հայացքը գամվել է նախագահության վրա: Սակայն Երդողանը հիմնականում մտածում է պատմության մեջ հետք թողնելու մասին: Եթե նրան հաջողվի ընդունել ազատական Սահմանադրություն եւ լուծել «Քրդական հարցը», ապա նա կարող է տեղ զբաղեցնել Աթաթուրքի եւ այլ նշանավոր թուրքերի կողքին»:

Այսպիսով, խորհրդարանական ընտրություններից հետո Երդողանը պետք է լուծի երկու հիմնական խնդիր՝ նոր Սահմանադրության ընդունումն ու «Քրդական հարցի» ժողովրդավարական կարգավորումը: Եթե Երդողանին հաջողվի նախագահական համակարգին անցում կատարելու հարցում ստանալ ընդդիմադիր կուսակցությունների եւ հենց իր կուսակիցների համաձայնությունը, ապա հաջորդ տարի նա կարող է հնգամյա ժամկետով ընտրվել նախագահ՝ նույն ժամկետով եւս մեկ անգամ վերընտրվելու հնարավորությամբ: Հակառակ դեպքում Երդողանը ստիպված կլինի 2015 թվականին լքել քաղաքական ասպարեզը:

ՀԵՏՆՏՐՈՒԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Սուրեն Սարյան

Հունիսի 12-ին Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրություններից հետո վերստին կարելիություն է այդ երկրի զարգացման ուղու, Մեծ Մերձավոր Արևելքում եւ աշխարհում նրա տեղի ու դերի հարցը:

Եթե տասնամյակներ շարունակ Թուրքիան համարվում էր Արեւմուտքի պաշտպանական միջնաբերդը, ապա այսօր արտաքին ընդարձակման ուղեգիծ է բռնել: Փորձագետները նշում են, որ Փոքր Ասիայում ներկայումս ձեւավորվում է աշխարհաքաղաքական ուժային կենտրոն, որը ցույց է տալիս իր ներուժը՝ սեփական քաղաքական խաղ տանելու համար: Եվ այդ ուժը կձգտի, օգտվելով արաբական աշխարհում հեղափոխությունների եւ ցնցումների ժամանակաշրջանից, գլխավորել տարածաշրջանը՝ որպես առաջնորդ երկիր:

Հայտնի է, որ ընտրություններում արդեն 3-րդ անգամ հաղթած Արդարություն եւ զարգացում կուսակցության արտաքին քաղաքական հայեցակարգն այն է, որ Թուրքիան ամենեւին էլ Արեւմուտքի ծայրամաս չէ, այլ գտնվում է Եվրասիայի կենտրոնում՝ պատմականորեն եւ աշխարհագրորեն կապված լինելով այնպիսի կենսական կարելու տարածաշրջանների հետ, ինչպիսիք են Մերձավոր Արևելքը, Բալկաններն ու Կովկասը:

Ըստ վերոնշյալ հայեցակարգի, Թուրքիան պատմական կարելու փուլ է ապրում՝ փորձելով իր շուրջը ձեւավորել ազդեցության, տնտեսական ու քաղաքական գործակցության ընդարձակ գոտի, բացառելով լարվածությունն իր սահմանների մոտ եւ հարեւան տարածաշրջաններում: Համարվում է, որ Թուրքիան տնտեսական մեծ կարողություն ունի եւ ձգտում է դառնալ նախկին օսմանյան տարածքի առաջատարը: Այդ պատճառով Անկարան այլեւս չպետք է թաքցնի իր մտադրությունները, իսկ տարածաշրջանի պետությունները դրա մեջ մեծ վտանգ չեն տեսնի, ընդհակառակը, կձգտեն ստանալ որոշ առավելություններ՝ մուտք ունենալով դեպի թուրքական շուկա եւ ապահովելով թուրքական ներդրումներ:

Փորձագետների գնահատականով, Թուրքիան ընտրություններից հետո կպահպանի իր արտաքին քաղաքականության բազմավեկտորու-

թյունը՝ շարունակելով իր ուղեգիծը ԵՄ-ին անդամակցելու եւ Մերձավոր Արեւելքում ազդեցությունն ընդլայնելու ուղղությամբ: Նրանք նաեւ կանխատեսում են, որ «արաբական գարնան» համատեքստում թուրքիայի քաղաքական կշիռը տարածաշրջանում շարունակաբար աճելու է: Ինչպես հայտարարեց թուրքիայի ԱԳ նախարար Ա.Դավութօլուն՝ «մեր նպատակն է վերինտեգրվել տարածաշրջանին»:

Հենց այդ վերինտեգրման քաղաքականության համատեքստում թուրքիան մտցրեց առանց մուտքի արտոնագրերի ռեժիմ Սիրիայի, Լիբանանի եւ Հորդանանի հետ: Բացի այդ, վերջին տասը տարում ԱԶԿ-ն տարբեր իսլամական կազմակերպությունների, այդ թվում՝ եղբայրությունների (թարիքատների) եւ տնտեսական ընկերությունների միջոցով փորձում է ամրապնդել կապերը Մերձավոր Արեւելքում գործող իսլամական կառույցների, ներառյալ՝ քաջ հայտնի «Մուսուլման եղբայրների» հետ: Ավելին, պարբերաբար քարոզչական գրոհներ ձեռնարկելով Իսրայելի դեմ՝ Էրդոդանին հաջողվեց ձեռք բերել հասարակ մահմեդականների համակրանքը:

Սպասվում էր, որ Ռ.Էրդոդանն իր երրորդ վարչապետությունը կսկսի Բաքու կատարելիք այցից, սակայն, պարզվեց, որ առաջին այցը կատարվելու է Եգիպտոս: Իսկ այն բանից հետո, երբ թուրքիայի նախագահ Գյուլը հայտարարեց, թե թուրքիան պատրաստվում է ճանաչել Պաղեստինի անկախությունը, ակնհայտ դարձավ, որ Անկարան գրավը դնում է առավելապես իսլամական-արաբական ուղղությամբ:

Վերջին շրջանում Ռ.Էրդոդանի կառավարությունը ջանքեր է գործադրել արաբական հեղափոխություններում խաղաղարար միջնորդի դեր ստանձնելու համար: Եգիպտոսում ցույցերի ժամանակ թուրքիայի վարչապետն առաջիններից էր, որ կոչ արեց Հոսնի Մուբարաքին հեռանալ նախագահի պաշտոնից, ապա Անկարան ակտիվ դիրք բռնեց նաեւ Լիբիայի եւ Սիրիայի ուղղություններով՝ հանդես գալով միջնորդական առաջարկներով: Թուրքական կառավարության ներկայացուցիչները պարբերաբար հանդես են գալիս հայտարարություններով այն մասին, որ թուրքիայում իսլամի եւ ժողովրդավարության հաջող համատեղման փորձն օրինակ կծառայի արաբական շարժումների համար: Բացի դրանից, թուրքիան ջանում է ցույց տալ Արեւմուտքին, թե որքանով կարելոր երկիր է դեպի արաբական Արեւելք մուտք գործելու համար: Մասնավորապես, Անկարան փորձում է համոզել Բրյուսելին, որ թուրքիային ԵՄ-ի կազմի մեջ ընդունելով՝ արաբա-մահմեդական աշխարհում կխթանվի ժողովրդավարության տարածումը:

Մինչդեռ այդ բոլոր հայտարարությունների տակ թաքնված է արաբական աշխարհում քաղաքական իրական ազդեցության բացակայության փաստը: Անշուշտ, Էրդողանը ձեռք է բերում արաբ բողոքավոր զանգվածների համակրանքը, սակայն արաբական քաղաքական էլիտաների համար թուրքական խոսքն էական նշանակություն ունենալ չի կարող:

Չետընտրական զարգացումներն արդեն սկսեցին հանգեցնել Էրդողանի կառավարության համար ոչ այնքան ցանկալի հետևանքների: Նախ, երկրի ներսում ուժգնացավ քրդական շարժումը, ինչը նաև տարածաշրջանային զարգացումների արձագանք է: Եվ անսպասելի սկսվեց թուրք-սիրիական հարաբերությունների վատթարացումը:

Դեռ մի քանի ամիս առաջ Սիրիայի հետ բարեկամական հարաբերությունները կազմում էին թուրքական արտաքին քաղաքականության անկյունաքարերից մեկը: Իսկ այսօր Թուրքիայի վարչապետը հանդես է գալիս ելույթներով, որտեղ մեղադրում է Բաշար Ասադի վարչակարգին՝ «անընդունելի գազանություններ կատարելու» մեջ: Նա հայտարարեց, որ Սիրիայում հնարավոր են միջկրոնական բախումներ եւ այդ երկրի տրոհում: Դժգոհություն հայտնելով Սիրիայում քրդական շարժման ակտիվացման եւ սիրիացի փախստականների հոսքի կապակցությամբ՝ Անկարան հայտարարեց թուրք-սիրիական սահմանին բուֆերային գոտի ստեղծելու մտադրության մասին: Ավելին, Անկարան զգուշացրեց Դամասկոսին, որ սահմանամերձ գոտում ցանկացած ռազմական գործողություն սիրիացի փախստականների դեմ կընկալվի որպես գործողություն Թուրքիայի դեմ: Անթալիայում անգամ գումարվեց սիրիական ընդդիմության հավաք: Ի պատասխան՝ Դամասկոսը մեղադրեց Անկարային Արեւմուտքի ճնշումներին միանալու քաղաքականության, ինչպես նաև Սիրիայում խռովության կազմակերպիչ համարվող «Մուսուլման եղբայրների» զինյալ խմբերին աջակցություն ցուցաբերելու մեջ: Իսկ Իրանը զգուշացրեց Թուրքիային չընդունել իր տարածքում ՆԱՏՕ-ի զորամիավորումներ՝ Սիրիայի դեմ հնարավոր հարձակման դեպքում:

Դա նշանակում է, ըստ թուրք փորձագետների, որ թուրքական տարածաշրջանային քաղաքականությունը փակուղի է մտել: Անկարան հաշվարկել էր, որ արաբական պետությունները, որոնք ցնցումների փուլում են, ի վիճակի չեն լինի համարժեքորեն արձագանքել թուրքական մարտահրավերներին: Այդ էր պատճառը, որ Սիրիայում խռովությունները սկսվելուց հետո Թուրքիան սկսեց պատրաստվել Ասադի վարչակարգի փոփոխությանը՝ հույս ունենալով այստեղ ձեռք բերել «վերահսկիչ փաթեթ»: Սիրիան, լինելով արաբական աշխարհի առանցքային երկիր,

կարող է հանդիսանալ ինչպես թուրքիայի մերձավոր գործընկերը, այնպես էլ նրա ազդեցության սահմանափակողը տարածաշրջանում: Անկարայի համար կարելու է, որ Իրանը՝ թուրքիայի դարավոր աշխարհաքաղաքական մրցակիցը, կգրկվեր իր սիրիական դաշնակցից: Թուրքական իշխող վերնախավում այն կարծիքին են, որ սուլունիական աշխարհը ստիպված կդիմի թուրքական հովանուն՝ ընդդեմ շիական Իրանի: Պակաս կարելու է Անկարայի համար, որ սուլունիների միավորման ընթացքում այն կամրապնդի գործընկերությունը Սաուդյան Արաբիայի հետ, որը կարող է դեպի թուրքիա ֆինանսական զգալի հոսքեր ապահովել: Մինչդեռ սուլունիզմի պահպան Սաուդյան թագավորության համար շատ կարելու է ճանապարհից հեռացնել շիական Իրանին եւ նրա ալեւի դաշնակից Ասադի վարչակարգին:

Միեւնույն ժամանակ, եթե թուրքիան Սիրիայի դեպքում պասիվ դիտորդ մնա, ապա հետզհետե սիրիական ցնցումները կարող են տարածվել նրա տարածքում՝ ներառելով քրդական շարժումը: Սիրիայի քրդերի գործողություններն Ասադի վարչակարգի դեմ հնարավոր է, որ ձեռք բերեն ազատագրական պայքարի բնույթ, եւ Սիրիայի տրոհման դեպքում կստեղծվի եւս մի քրդական ինքնիշխան միավորում, որն իրաքյանի հետ միասին արդեն հսկայական արագություն կհաղորդի թուրքական Քրդստանում պայքարի ծավալմանը: Ուստի, Էրդողանը շահագրգռված է հնարավորինս արագ կարգավորել «սիրիական հարցը»: Արդեն հիմա թուրք պաշտոնյաները հայտարարում են, որ Սիրիայից փախստականների տեսքով Քրդական բանվորական կուսակցության զինյալ խմբերը ներթափանցում են թուրքական Քրդստան:

Ինչ վերաբերում է Իրաքին, ապա, կարելի է ասել, հենց այստեղ է վճռվելու թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության ճակատագիրը: Իրաքն այժմ շատ նպաստավոր գոտի է թուրքիայի կողմից ներդրումների եւ առեւտրի համար. Անկարան փորձում է այդ երկիրը ներգրավել իր տնտեսական ու քաղաքական տարածության մեջ: Առաջին հերթին, թուրքիան ձգտում է ամրապնդել թուրքախոս բնակչության դիրքերն Իրաքում՝ այն ներկայացնելով ոչ թե որպես ազգային փոքրամասնություն, այլ պետականակազմ ազգ՝ սուլունի արաբների, շիա արաբների եւ քրդերի հետ մեկտեղ: Բացի այդ, ներդրելով իրաքյան Քրդստանում շուրջ 10 մլրդ դոլար՝ Անկարան նպատակ է հետապնդում ինտեգրել այս երկրամասն իր տնտեսական տարածության մեջ:

Սակայն, մյուս կողմից, այս պայմաններում հյուսիսային Իրաքի հետ սահմանի թափանցիկությունը թույլ է տալիս երկու կողմերի քրդերին

կանոնավոր կերպով հարաբերակցվել, ինչն էլ ավելի է ուժեղացնում քրդական շարժումը:

Եվս մի կարևոր գործոն, որ լրջորեն սահմանափակում է թուրքիայի տարածաշրջանային հավակնությունները. ԱՄՆ ռազմական ներկայությունը Չարավային Կովկասում, Մերձավոր Արևելքում եւ Կենտրոնական Ասիայում: Ակնհայտ է, որ ո՛չ ամերիկացիները, ո՛չ էլ եվրոպացիները թույլ չեն տա թուրքիային ավելի ակտիվ դեր ստանձնել տարածաշրջանային խնդիրների կարգավորման գործում, քան որպես արեւմտյան շահերը սպասարկող ուժի:

Պարզ է նաեւ, որ թուրքիայի ակտիվացումն արաբական Արևելքում եւ Կովկասում կբերի Իրանի, Ռուսաստանի, Սիրիայի, Իսրայելի եւ այլ ուժերի հակազդեցությանը: Այս առումով թուրքիայի բախումն իր աշխարհաքաղաքական հակառակորդների հետ կամ ներգրավումը տարաբնույթ հակամարտությունների մեջ դառնում է էական գործիք՝ թուրքիայի հավակնությունները զսպելու համար: Որքան նոր թուրքական կայսրության նախագիծը խորանա, այնքան այն ավելի ու ավելի հաճախակի բախվելու է տարածաշրջանային մյուս հիմնական խաղացողների շահերի հետ:

Չետաքրքրական է, որ «գբաղված լինելով» Լիբիայում՝ Արեւմուտքը կարծես թուրքիայի ուսերի վրա է դնում Բաշար Ասադի վարչակարգի դեմ ճնշումների բեռը: Բավական է նշել, որ Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար Չեյզը հայտարարեց, որ «մեր թուրք գործընկերները կանեն ամեն հնարավորը Ասադի վարչակարգի վրա ճնշումներ գործադրելու համար: Նրանք Ասադին կհասկացնեն, որ նա կորցնում է իր իշխանությունը եւ պետք է բարեփոխումներ իրականացնի կամ հեռանա»:

Դրանով թուրքիան փաստորեն ընկնում է ծուղակի մեջ: Եթե այն հաջողությամբ կատարում է իր վրա դրված առաքելությունը, ապա ամբողջ արաբական աշխարհը ձեռք է բերում որպես հակառակորդ, քանի որ արաբները չեն ների Օսմանյան կայսրության «ժառանգներին» արաբական գործերին միջամտելու փաստը: Բացի դրանից, թուրքիան ուղղակիորեն կհայտնվի Իրանի շահերի դեմ բախման վտանգի առաջ: Իսկ ձախողվելու դեպքում թուրքիան ցույց կտա բոլորին, որ ի վիճակի չէ կատարել իր կողմից հռչակվող տարածաշրջանային առաջնորդի դերը:

Վերջապես, ինչպես նշում են փորձագետները, թուրքիայի տնտեսական ռեսուրսները կարող են չբավարարել տարածաշրջանային առաջնորդ դառնալու համար, ինչպես դա տեղի ունեցավ Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ Անկարան փորձեց գրավել առաջնորդող դիրքեր թյուրքական աշխարհում:

Դեռևս անորոշության մեջ են թուրք-իսրայելական հարաբերությունները: Հայտնի է, որ Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ գոյություն ունեն բազում ավանդական կապեր, հատկապես՝ ռազմաքաղաքական բնագավառում, ուստի, երկու կողմն էլ ձգտում են «չայրել կամուրջները»: Ուստի, հենց հետընտրական շրջանում ակտիվացան Թուրքիայի եւ Իսրայելի հաշտեցման փորձերը, ինչին առավելապես նպաստում է Սիրիայի դեմ ջանքերի համատեղման անհրաժեշտությունը: Հարկ է նշել, որ սիրիա-թուրքական մերձեցումը սկսվեց իսրայելա-թուրքական հարաբերությունների վատթարացման ընթացքին զուգահեռ: Հիմա, կարծես թե, սկսվում է հակառակ գործընթացը:

Իսրայելն իր պաշտպանության նախարար Բարաքի միջոցով հայտարարեց, որ Երուսաղեմը պատրաստ է վերադառնալ Թուրքիայի հետ հարաբերությունների նախկին մակարդակին՝ մոռանալով անցյալում եղած վիրավորանքները: Մինչդեռ սկզբից արտգործնախարար Դավութօղլուն, ապա վարչապետ Էրդողանն էլ պնդեցին, որ Թուրքիան չի գնա Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորման, քանի դեռ իսրայելական կառավարությունը ներողություն չի խնդրել 2010թ. մայիսին «ազատության նավատորմի» հետ տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ: Բացի այդ, Իսրայելը պետք է հանի Գազայի հատվածի շրջափակումը: Իսրայելի կառավարության ղեկավարներն ի պատասխան հայտարարեցին, որ ներողություն խնդրելու համար առիթ չունեն եւ չեն պատրաստվում ազգային ստորացում թույլ տալ: Փաստորեն, Իսրայելի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների կարգավորման մասին բանակցություններն ավարտվեցին անարդյունք:

Ամեն դեպքում Իսրայելի հետ լիարժեք հարաբերությունների եւ դաշինքի վերականգնումը հավանական չէ, քանի որ երկու պետությունների շահերը տարածաշրջանում մտել են խոր հակասությունների մեջ, որոնցից գլխավորներն են՝ մերձավորարեւելյան շուկաներում առաջնորդությունը եւ տարածաշրջանի տրոհումն ավելի փոքր միավորների, մասնավորապես, նույն Քրդստանի ստեղծումը, որն ուղղակի բխում է Իսրայելի շահերից ու հակասում Թուրքիայի շահերին:

Միաժամանակ, սիրիական դեպքերը ցույց են տալիս, որ Մերձավոր Արեւելքում գերիշխանության ձգտելու ճանապարհին՝ Թուրքիան ներքաշվում է տարածաշրջանային անկայունության ու ցնցումների մի փուլ, ինչը նման է Առաջին աշխարհամարտի մեջ Օսմանյան կայսրության ներքաշվելու ընթացքին:

Կարելի է եզրակացնել, որ «հարեւանների հետ զրո խնդիրներ»

սկզբունքի վրա հիմնված թուրքիայի նոր տարածաշրջանային քաղաքականությունը, որն անվանեցին «նեոսամաիզմ», փաստորեն չաշխատեց: Թուրքիան առանձնապես որել է լուրջ ազդեցություն ձեռք չբերեց, եւ ակնհայտ է, որ նրա՝ որպես տարածաշրջանային տերության, հնարավորությունները մնալու են սահմանափակ, իսկ Թուրքիայի վրա ճնշման առավել ազդեցիկ լծակ է մնալու քրդական «խաղաքարտը»:

Ստեղծված իրավիճակում Թուրքիան պետք է կրկին ապավինի ճկուն եւ մարտավարական դաշինքներին, քանի որ լուրջ ռազմավարությունը տարածաշրջանում ներկայիս արագընթաց զարգացումների պարագայում դառնում է պարզապես անհնար: Թուրքիան դեռ օգտագործելու է իր ունեցած լծակներն ու խաղաքարտերը, որոնք են ռազմական հզորությունը եւ կայացած ուժային համակարգը, տնտեսական վերելքը, Բալկաններում, Կովկասում, Մերձավոր Արեւելքում ու Կենտրոնական Ասիայում ազդեցության տարրերը, ԱՄՆ-ի, ԵՄ-ի եւ Ռուսաստանի քաղաքական, ռազմական ու էներգետիկ շահերի սպասարկումը:

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ
(աշխարհիկության և կրոնականության պայքարի
համատեքստում)**

Սեւակ Սարուխանյան

Իրանի Իսլամական Հանրապետության ներքաղաքական և հասարակական կյանքում վերջին տարիներին տեղի են ունեցել էական փոփոխություններ: Մ.Ահմադինեժադի նախագահ ընտրվելուց հետո Իրանի քաղաքական և կառավարչական էլիտան լուրջ ձեւափոխությունների է ենթարկվել:

Մ.Ահմադինեժադի՝ 2005-ին ձեւավորած առաջին կառավարությունն ամենաաշխարհիկն էր Իրանի հետհեղափոխական պատմության մեջ: Չնայած կառավարության անդամներն իսլամական գաղափարական եզրերով առաջնորդվող գործիչներ էին, նրանց մեծամասնությունը, մինչ կառավարությունում հայտնվելը, միայն կառավարչական կարիերա էր ունեցել, և միայն եզակիներն էին ներկայացնում զուտ կրոնական շրջանակները:

2008թ. խորհրդարանական ընտրությունները փոխեցին նաեւ իրանական մեջլիսի տեսքը՝ այն ավելի աշխարհիկ դարձնելով: Ինչպես Ահմադինեժադի առաջին և երկրորդ կառավարության, այնպես էլ խորհրդարանի դեպքում այս կարեւոր քաղաքական մարմնի բոլոր անդամներն իրենց քաղաքական գործունեության հիմքում սկզբունքորեն իսլամն ու իսլամական հանրապետության գաղափարն են դնում, սակայն կենսագրական առումով խորհրդարանի պատգամավորների մեծ մասը որեւէ առնչություն չունի կրոնական գործունեության և կրոնական կառույցների հետ:

Սա կարեւոր իրողություն է՝ պայմանավորված այն նշանակալի դերով և կառուցվածքային առանձնահատկություններով, որոնց տիրապետում է Իրանի կառավարման համակարգը:

Այս համակարգի հիմքում ընկած է ոչ այնքան երկրի՝ հոգեւոր առաջնորդի կողմից ղեկավարվելու սկզբունքը, որքան կրոնական և պետական մարմինների միահյուսումը մեկ ընդհանուր կաղապարի մեջ, որտեղ փոխլրացման և քննարկումների միջոցով ձեւավորվում է պետական քաղաքականությունը: Բավական երկար ժամանակ, երբ իրանական կառավարությունում և խորհրդարանում առաջատար դիրքերը զբա-

ղեցված էին կրոնական գործիչների կողմից, այս կաղապարը գրեթե իդեալապես ապահովում էր պետական քաղաքականության առավելագույն համաձայնեցվածությունը քաղաքական/կրոնական շրջանակների բոլոր թեւերի հետ: Մինչհամադիներեժայան եւ կառավարման համակարգի աշխարհիկացման շրջանի յուրահատկությունն այն էր, որ կրոնական գործիչները վերահսկում էին պետական կառավարման ամբողջ համակարգը, եւ որոշումների կայացման գործընթացում ծագած բոլոր տարածայնությունները հարթվում էին կրոնական շրջանակներում՝ բանակցությունների եւ զիջումների միջոցով: Բանակցությունները, գաղափարական իմաստով, հիմնականում ընթանում էին հավասարների միջեւ. խորհրդարանի պատգամավորը, նախարարն ու Նպատակահարմարության խորհրդի ներկայացուցիչը կարող էին ունենալ նույն կրոնական աստիճանը եւ հասարակական կարգավիճակը:

Բավական հետաքրքիր եւ մասամբ ժողովրդավարական կառավարման այս մոդելն իսլամական հանրապետությանը թույլ էր տալիս խուսափել ներքաղաքական ճգնաժամերից եւ ներէլիտային հակասություններից: Փոխլրացման եւ հակասությունների հարթման այս համակարգը հեղափոխական փոփոխություններ կրեց Մ.Ահմադինեժայի նախագահ ընտրվելուց հետո, ինչի հետեւանքը հենց կառավարության եւ խորհրդարանի աշխարհիկացումն էր, որն ինչ-որ տեղ անդունդ ստեղծեց կրոնական շրջանակների եւ կառավարության միջեւ: Այս անդունդը հիմնված է երկու հիմնարար եզրերի վրա.

1. Գաղափարախոսական. չնայած գործող աշխարհիկ կառավարությունը երբեք չի քննարկել երկրի կառավարման համակարգի արդարության եւ արդյունավետության հարցը եւ հանդես է գալիս իսլամական հեղափոխության արժեհամակարգով, գաղափարական տեսանկյունից այն չի կարող լինել նույնը, ինչ բարձրագույն իշխանական լծակներով օժտված կրոնական շրջանակները: Կառավարության եւ հոգեւոր շրջանակների միջեւ հակասությունները ծագել են հենց 2005-ին, սակայն քանի դեռ Մ.Ահմադինեժայը վայելում էր Ալի Խամենեյի բացարձակ վստահությունն ու աջակցությունը, դրանք ջրի երես են դուրս եկել եզակի դեպքերում: Իսկ Խամենեյի կողմից նախագահի առաջին իսկ քննադատությունից հետո այս հակասությունները հրաբխի պես ժայթքեցին եւ լցրին իրանական հանրային քաղաքականության ողջ օրակարգը:

Վերջին 3-4 ամիսների ընթացքում Իրանի հոգեւոր շրջանակները բուն գաղափարական հենքի վրա քննադատեցին նախագահի եւ կառավարու-

թյան ողջ քաղաքականությունը. Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունների կարգավորման փորձը, Բահրեյնի շիաներին աջակցություն չցուցաբերելը, պետական սեփականության մասնավորեցումը, սուբսիդավորման վերացումը, բյուջետային պլանավորումը եւն: Սխալ է կարծել, թե այս քննադատությունը զուտ կոնյունկտուրային է. այն իրապես հիմնված է գաղափարախոսական հենքի վրա:

2. *Կարգավիճակային*. աշխարհիկ կառավարության ձեւավորումն Իրանում լուրջ կարգավիճակային խնդիրներ առաջ բերեց իսլամական հանրապետության կառավարման համակարգում: Ինչպես նշեցինք, կրոնական գործիչները՝ անկախ կառավարման համակարգում զբաղեցրած պաշտոններից, կարգավիճակային տեսանկյունից շատ հաճախ հավասար էին իրար, եւ ընթացիկ քաղաքական ու տնտեսական որոշումների ընդունման գործընթացում բանակցություններն ու վեճերը նրանց միջեւ, որպես կանոն, բերում էին փոխզիջումային որոշումների ընդունմանը: Աշխարհիկ կառավարության ձեւավորումից հետո այս իրավիճակը փոխվեց. անկախ զբաղեցրած պաշտոնից եւ դիրքից, Իրանի աշխարհիկ գործիչներն իսլամական հանրապետությունում իրենց կարգավիճակով ավելի ցածր են կրոնական գործիչներից, եւ վերջիններիս հետ բանակցությունները կառավարության, այդ թվում նաեւ նախագահի համար, եղել են բանակցություններ վերադասի եւ ստորադասի, բայց ոչ երբեք հավասարների միջեւ: Իրանում ներկայումս գործող կառավարությունը, մանավանդ Ալի Խամենեյի՝ կառավարությանն աջակցելու քաղաքականությունից հրաժարվելուց հետո, ինչ-որ չափով իր բնույթով նման է ժամանակավոր պայմանագրային հիմունքներով գործող աշխատանքային խմբի, որը պարտավոր է գործել համաձայն այն պահանջների, որոնք նրան է ներկայացնում իրական ղեկավարությունը՝ ի դեմս հոգեւոր իշխանությունների:

Մի կողմ դնելով գաղափարախոսական գործոնը՝ պետք է նշենք, որ Մ.Ահմադինեժադի վերջին տարիներին որդեգրած քաղաքականությունն ուղղված է եղել կառավարության կարգավիճակի փոփոխությանը, ինչի համար երկրում իրականացվել են բավական լուրջ վարչարարական բարեփոխումներ: Դրանց հիմնական ուղղվածությունն է եղել նախարարությունների ֆինանսական եւ պլանավորման գործառույթների փոխանցումը նախագահի աշխատակազմին, ինչի արդյունքում բավական ամրապնդվել էին նախագահի եւ աշխատակազմում աշխատող նրա թիմի դիրքերը, ավելացել էր նրանց ձեռքբերում գտնվող ֆինանսատնտեսական եւ վարչարարական լծակների թիվը: Գործընթացներն Իրանում ուղղված

էին այն բանին, որ երկրում ձեւավորվի, պայմանականորեն ասած, թուրքականին մոտ «խորքային պետության» մոդել, երբ, չնայած գործող իրավական ձեւաչափերին, երկրում լինի կառույց եւ խումբ, որը վերսահմանադրական լծակների տիրապետի եւ փորձի կարելու որոշումներ ընդունելիս խուսափել սահմանադրությամբ հաստատված բարձրագույն պետական մարմինների (Իրանի դեպքում՝ կրոնական իշխանությունների) հետ այդ որոշումները համաձայնեցնելու անհրաժեշտությունից: Ինչ-որ տեղ Մ.Ահմադինեժադի քաղաքական գիծն ուղղված էր նաեւ ներկայիս թուրքական «աշխարհիկ իսլամի» մոդելի ձեւավորմանն Իրանում, որում իսլամը պահպանվում է որպես պետական քաղաքականության հիմնաքար, սակայն պետության կառավարումն իրականացվում է աշխարհիկ ուժերի կողմից:

Սակայն ի տարբերություն Թուրքիայի, որտեղ, հաշվի առնելով սուլունի մահմեդականության առանձնահատկությունները, չկա իսլամական հոգեւորական հիերարխիա, իսկ կրոնը՝ որպես այդպիսին, ինստիտուցիոնալացված չէ, շիա մահմեդական հոգեւորականությունն Իրանում՝ իր կրոնական ինստիտուտներով, գերանուր է, 1979-ից հետո՝ նաեւ պետականաստեղծ, եւ Մ.Ահմադինեժադի քաղաքականությունն այս տեսանկյունից ի սկզբանե դատապարտված էր ձախողման: Իրանում կրոնական իսլամական իշխանությունները երբեք չեն կարող փոխարինվել աշխարհիկ իսլամական իշխանություններով, իսկ պետական համակարգի փոփոխություն կարող է տեղի ունենալ միայն դասական հեղափոխական ճանապարհով:

Չնայած ներկայիս քաղաքական ճգնաժամն Իրանում ցույց տվեց, թե ինչ ամուր եւ կազմակերպված են կրոնական իշխանություններն Իրանում, կրոնական եւ աշխարհիկ իշխանություն հակասությունների հեռանկարը, անգամ Մ.Ահմադինեժադի հեռանալուց հետո, պահպանվելու է: Ներքին փոփոխություններն Իրանում ակնհայտ են. հասարակությունը դարձել է ավելի ակտիվ, եւ բարեփոխումների պահանջներն ավելի են սրվել: Ի տարբերություն 1997-ի, երբ Իրանի նախագահ ընտրվեց բարեփոխումների կողմնակից (սակայն դրանք չիրականացրած) Մ.Խաթամին, այսօր իրանական հասարակությունը կրոնական գործիչների մեջ չի տեսնում այնպիսի մարդկանց, որոնք կարող են փոփոխություններ կատարել Իրանում:

Փոփոխություններ ասելով նկատի չունենք միայն ազատականացումը. փոփոխությունների կարիք եւ պահանջ է զգում նաեւ Իրանի հասարակության պահպանողական հատվածը, որի մեծ մասը 2005-ին

ծայնը տվեց պահպանողական, բայց աշխարհիկ Մ.Ահմադինեժադին: Ներկայումս կարելի է փաստել, որ իրանական կրոնական գործիչների մեջ չկան այնպիսիք, որոնք բարեփոխական կամ էլ պահպանողական կարգախոսներով կարողանան հաջողության հասնել 2013-ին նախատեսված նախագահական ընտրություններում: Բարեփոխիչներն, ըստ ամենայնի, ընտրությունների գնալու են աշխարհիկ Մ.Մուսավիի ղեկավարությամբ, իսկ պահպանողականներն, ամենայն հավանականությամբ, ինչպես եւ 2005-ին, հանդես են գալու աշխարհիկ թեկնածուով: Կլիմի^օ դա ծայրահեղ պահպանողական, մեջլիսի խոսնակ Լարիջանին, թե^օ սահմանափակ պահպանողական, Թեհրանի քաղաքապետ, սեփական մոտոցիկլով աշխատանքի գնացող Ղալիբաֆը՝ արդեն երկրորդական հարց է:

Այնպես որ, ապագա նախագահի հետ կապված՝ աշխարհիկ - հոգեւոր իշխանություններ հակասությունները մեծ շանսեր ունեն կրկնվելու նաեւ 2013-ից հետո, ինչը կտրուկ մեծացնում է քաղաքական նոր ճգնաժամերի առաջացման եւ դասական հակահամակարգային հեղափոխության իրականացման հնարավորություններն Իրանում:

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Մեզան Օ. Սալիվան

Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող փոփոխություններին զուգընթաց աստիճանաբար ոգեւորությունն իր տեղն է գիջում մտահոգությանն ու անհանգստությանը, ինչը հիմնված է այն մտավախության վրա, որ ստեղծված խառնաշփոթից կօգտվեն հակաարեւմտյան դիրքորոշում ունեցող կրոնական ծայրահեղական խմբավորումները: Միւսումյայն ժամանակ, առավել լավատես փորձագետները նշում են, որ կան հանգամանքներ, որոնք ի վիճակի են կանխել ծայրահեղականների ազդեցության տարածումը՝ դրանց թվում նշելով հին վարչակարգերի դեմ հանդես եկող ուժերի մեծ մասի աշխարհիկ բնույթը եւ հանրության շրջանում ծայրահեղականների ունեցած համեմատաբար ցածր վարկանիշը:

Հարկ է նշել, որ քչերն են մինչ այժմ ուշադրություն դարձրել մեկ այլ հանգամանքի վրա, որն ի վիճակի է տարածաշրջանում նպաստել չափավոր գաղափարների տարածմանը. նմանատիպ հանգամանք է տարածաշրջանի քրդական բնակչության աստիճանաբար աճող ազդեցությունը:

ԱՄՆ-ի եւ Եվրոպայի քաղաքական հիմնական ուժերը պետք է առավել մեծ ուշադրություն դարձնեն քրդական աճող ազդեցությունից բխող ինչպես հնարավորություններին, այնպես էլ հավանական ռիսկերին: ԱՄՆ-ը եւ Եվրամիությունը պարտավոր են հատուկ ռազմավարություն մշակել, որն ուղղված կլինի արեւմտամետ դիրքորոշում ունեցող քրդական բնակչության ազդեցության ավելացմանը:

Մերձավոր Արեւելքում քուրդ ժողովրդի պատմությունը ճնշումների, կանխված հավակնությունների եւ ողբերգությունների անվերջ շղթա է հիշեցնում: Տարածաշրջանում քրդերի թիվը գերազանցում է երեսուն միլիոնը, նրանց մեծամասնությունը մահմեդական է, եւ միւսումյայն ժամանակ նրանք էթնիկապես տարբերվում են արաբներից, պարսիկներից եւ թուրքերից: Քրդերը երկար տարիներ պայքարում են ինքնավարություն կամ նույնիսկ անկախություն ստանալու համար:

Առավել մեծ հնչեղություն են ստացել քրդերի դեմ իրականացված գործողություններն Իրաքում, այդ թվում 1980-ական թվականներին Սադամ Հուսեյնի կողմից իրականացված ցեղասպանական հարձակում-

ները քիմիական զենքի օգտագործմամբ: Իրաքի հարեւան Սիրիայում շուրջ երկու միլիոն քուրդ պայքարել է ինքնության պահպանման համար, մինչ կառավարությունը քայլեր էր ձեռնարկում նրանց բռնի ձուլման ուղղությամբ՝ այդ թվում արգելելով քրդերենի օգտագործումը: Քրդերի մի զգալի հատված չունեւ Սիրիայի քաղաքացիություն, եւ միայն 2011թ. ապրիլին Բաշար Ասադը քաղաքացիություն շնորհեց շուրջ 300.000 քրդերի:

Թուրքիայում քրդերի թիվը մոտ 15 միլիոն է, որոնց մի փոքր հատվածը ներգրավված է ահաբեկչական գործողություններում: Այստեղ եւս քրդերի պատմությունը լի է ապստամբությունների եւ բռնի տեղահանությունների փաստերով: Իրանում բնակվող ավելի քան հինգ միլիոն քրդերը քրդերեն լեզվի օգտագործման խնդրում ունեն մի շարք ազատություններ, սակայն այստեղ եւս հաճախակի են բախումները քրդական խմբավորումների եւ կառավարական ուժերի միջեւ:

Միեւնույն ժամանակ, տարածաշրջանում ընթացող մի շարք զարգացումներ կարող են արմատապես փոխել քրդերի դրությունը: Իրաքի քրդերը, որոնք 1991թ. Օոցի պատերազմից հետո ինքնավարություն էին ստացել, զգալի առավելություններ ձեռք բերեցին 2003թ. Սադամ Յուսեյնի վարչակարգի տապալումից հետո: Քրդական կուսակցություններն այժմ զգալի ազդեցություն ունեն Բաղդադում եւ բոլոր կոալիցիոն կառավարությունների կարեւոր անդամներից են: 2005թ. ի վեր ազգությամբ քուրդ Ջալալ Թալաբանին զբաղեցնում է Իրաքի նախագահի պաշտոնը: Յուսիսային Իրաքում քրդական ինքնավարությունը զգալի լիազորություններ ունի, այստեղ բավական տպավորիչ են պետական եւ մասնավոր ներդրումների չափերը, ինչպես նաեւ տնտեսության աճի տեմպերը:

Տարածաշրջանի այլ հատվածներում քրդերի ձեռքբերումները նվազ ակնհայտ են, սակայն նրանք եւս զգալի կարեւորություն են ներկայացնում: Թուրքիայում քրդերը վերջին տասնամյակների ընթացքում առաջին անգամ բավականաչափ մոտ են իրենց խնդիրների կարգավորմանը: Յունիսին Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տոնեց իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցությունը: Միեւնույն ժամանակ, սահմանադրական բարեփոխումների իրականացման համար կուսակցությանն անհրաժեշտ է խորհրդարանում նոր գործընկերներ գտնել: Թուրքիայի հիմնական քրդական կուսակցությունը, ինչպես նաեւ անկախ քուրդ պատգամավորները կարող են ստանձնել էրդողանի կառավարության աջակիցների դերը, ինչը նրանց հնարավորություն կտա կարգավորել Թուրքիայի քուրդ բնակչության առջեւ

ծառայած խնդիրների մեծ մասը: Քրդերն արդեն բավական հստակ հայտարարել են, որ ցանկանում են վերջ տալ քրդաբնակ նահանգներում իրականացվող ռազմական գործողություններին եւ հասնել քաղաքական ինքնավարության ձեւավորմանը:

Սիրիայում տեղի ունեցող զարգացումների համատեքստում քրդերի համար այստեղ եւս կարող են նոր հնարավորություններ ստեղծվել: Եթե Ասադի վարչակարգը տապալվի, ապա Սիրիայում նոր իշխանությունը կարող է ձեւավորվել տարբեր էթնիկ եւ կրոնական համայնքների միջեւ լիազորությունների բաշխման միջոցով, մոտավորապես այն տարբերակով, ինչը տեղի ունեցավ Իրաքում Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո: Իրադարձությունների նման ընթացքը քրդերի համար հավելյալ հնարավորություններ կստեղծի:

Միեւնույն ժամանակ, պետք է ընդունել, որ տարածաշրջանում աստիճանաբար ավելացող քրդերի ազդեցությունը կարող է նաեւ մի շարք խնդիրների եւ անգամ հակամարտությունների պատճառ դառնալ: Օգտվելով Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող փոփոխություններից՝ քրդերը կարող են առաջ քաշել անկախ քրդական պետության ստեղծման պահանջ: Նման պահանջի ներկայացումը հավանական է՝ հաշվի առնելով քրդերի կրած տառապանքները եւ նրանց ցանկությունը՝ վերջ տալ Բաղդադի, Դամասկոսի եւ Անկարայի քմահաճույքներին: Սակայն հնարավոր է նաեւ նոր ծագող այս ուժի քաղաքական հասունության աճ, ինչն արձանագրվեց իրաքյան Քրդստանում: Իրաքի քրդերի մեծ մասը ճիշտ գնահատեց այն առավելությունները, որը նրանց տալիս է ժողովրդավարական Իրաքի բաղկացուցիչ մաս լինելը եւ, միեւնույն ժամանակ, այն բարդությունները, որոնք անխուսափելիորեն կառաջանան քրդական անկախ պետության եւ տարածաշրջանի այլ պետությունների հարաբերություններում:

Կարելի է ենթադրել, որ քրդերի ազդեցության աճը կհանգեցնի ոչ թե անկախ քրդական պետության ստեղծման գաղափարի համակիրների ավելացմանը, այլ կնպաստի քրդերի կողմից «գլոբալիզացիոն» ռազմավարության որդեգրմանը: Այս նոր մոտեցումն ընդունում է ժամանակակից միջազգային հարաբերություններում պետական սահմանների աստիճանաբար նվազող կարելիությունը եւ հիմնականում ուժերը կենտրոնացնում է ամուր տնտեսական եւ մշակութային կապերի, ինչպես նաեւ տարբեր հաստատությունների ձեւավորման վրա, որոնք շրջանցում են քաղաքական սահմանները: Աշխատելով «վիրտուալ» Քրդստանի ստեղծման ուղղությամբ՝ կերպափոխված Մերձավոր Արեւելքի

քրդերը կարող են իրականացնել սեփական ձգտումների մեծ մասը՝ առանց տարածաշրջանի պետությունների դժգոհության առաջբերման:

ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները պետք է իրենց ջանքերն ուղղեն նմանատիպ զարգացումների աջակցությանը, քանի որ դա ձեռնտու կլինի ոչ միայն քրդերին, այլեւ ԱՄՆ-ի շահերին: Քրդերն առավել հակված են չափավորությանը, ինչը, թերեւս, բխում է նրանց պատմական փորձից: Չնայած նրանց մեծ մասը մուսուլմաններ են, սակայն միաժամանակ կողմ են աշխարհիկ պետության ձեւավորմանը: Քրդերը Մերձավոր Արեւելքում առավել ամերիկամետ էթնիկ խումբն են, որոնք զգալի չափով օգտվել են Ծոցի պատերազմից հետո ԱՄՆ-ի կողմից Իրաքի տարածքում ոչ թռիչքային գոտիների ստեղծումից: Միեւնույն ժամանակ, Իրաքի քրդերը շահագրգռված են Իրաքյան Քրդստանում արեւմտյան, մասնավորապես՝ ամերիկյան ներդրումների ավելացմամբ:

Այնպիսի տարածաշրջանը, որտեղ քրդերն էական դերակատարություն կունենան Իրաքի, Սիրիայի եւ Թուրքիայի ներքաղաքական գործընթացներում, ինչպես նաեւ կտիրապետեն զգալի տնտեսական լծակների, միանշանակ ամերիկյան շահերին ավելի համապատասխան կլինի: Իսկ եթե Սիրիայի, Իրաքի եւ Թուրքիայի քրդերի հաջողությունները պատճառ դառնան Իրանի քրդերի շրջանում հակակառավարական տրամադրությունների ավելացմանը, դա եւս կնպաստի տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերի առաջնդմանը:

Վերոհիշյալ հանգամանքներն ուղղակի ստիպում են Բ.Օբամայի վարչակազմին Մերձավոր Արեւելքում ամերիկյան նոր ռազմավարությունում կարելուր նշանակություն հատկացնել քրդական գործոնին: ԱՄՆ-ը նախելառաջ պետք է շարունակի ջանքերն Իրաքի կենտրոնական իշխանությունների եւ քրդերի միջեւ առկա խնդիրների կարգավորման ուղղությամբ: Մասնավորապես, նավթից ստացվող եկամուտների բաշխման մասին օրենքի ընդունումը կնպաստի Իրաքի պետության շրջանակներում քրդերի ներգրավման մեծացմանը՝ նրանց երաշխավորված ձեւով տրամադրելով նավթային եկամուտների մի մասը:

Սիրիայի խնդրում ԱՄՆ-ը պետք է առաջ քաշի հետասաղյան կարգավորման այնպիսի ծրագիր, որը որոշակի քաղաքական դերակատարություն կտրամադրի Սիրիայի կրոնական եւ էթնիկական բոլոր համայնքներին: Այդ համակարգը նպաստավոր կլինի ոչ միայն քրդերի, այլեւ բոլոր սիրիացիների համար: Թեւեւ Ասադը կարող է պահել իշխանությունն առաջիկա ամիսների ընթացքում, ամենայն հավանականությամբ, երկարաժամկետ հեռանկարում նա եւս կկորցնի իշխանությունը: Ի տար-

բերությունն ենենի, որտեղ ԱՄՆ-ը երկար տարիներ սերտ հարաբերություններ ուներ գործող նախագահի հետ, Սիրիայում ԱՄՆ-ը չի կարող հանդես գալ միջնորդի դերում: Սակայն ԱՄՆ-ի դաշնակից թուրքիան կարող է Սիրիայում միջնորդի դեր ստանձնել, եւ ԱՄՆ-ը պետք է քաջալերի թուրքիային քայլեր ձեռնարկել Սիրիայում իրադարձությունների զարգացումն այդ սցենարով ուղղորդելու համար:

Բացի այդ, ԱՄՆ-ը պետք է կոչ անի թուրքիայում ձեւավորված նոր կառավարությանը քրդերի հանդեպ առավել մեղմ դիրքորոշում որդեգրել: Թուրքիայում քրդական խնդիրը պետք է դառնա թուրք-ամերիկյան հարաբերությունների հանգուցային խնդիրը: Վարչապետ Էրդողանը նախկինում ընդունել է քրդերի խնդիրը կարգավորելու անհրաժեշտությունը: ԱՄՆ-ը պետք է վերսկսի ջանքերը քուրդ զինյալների համաներման, քրդերեն լեզվով կրթության կազմակերպման եւ քրդաբնակ շրջաններին առավել մեծ ինքնավարություն շնորհելու խնդրում փոխադարձ ընդունելի լուծումներ գտնելու ուղղությամբ:

Միեւնույն ժամանակ, ԱՄՆ-ը պետք է օգտագործի Իրաքի քրդերի հետ ունեցած սերտ հարաբերությունները տարածաշրջանային զարգացումների նկատմամբ Իրաքի քրդերի շրջանում առավել պրագմատիկ դիրքորոշում ձեւավորելու համար: Իրաքի քրդերը պետք է առաջնորդի դեր կատարեն տարածաշրջանի քրդական բնակչության համար: ԱՄՆ-ը պետք է շարունակի իր քայլերը՝ հետ պահելու համար Իրաքի քրդերին անկախ պետության ստեղծման պահանջից: Մերձավոր Արեւելքում ԱՄՆ-ի նոր ռազմավարությունը կարող է նպաստել տարածաշրջանում ազատության եւ բարեկեցության տարածմանը, ինչպես նաեւ քրդերի եւ Արեւմուտքի շահերի առաջնդմանը:

Արտաքին հարաբերությունների խորհուրդ,

Հունիս 2011

Անգլերենից թարգմանեց
Բենիամին Պողոսյանը

«ԱՐԱՔԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ» ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ **Արտաշես Տեր-Չարությունյան**

«Արաքական գարունը». դիտարկում

Ամերիկյան ու եվրոպական փորձագիտական շրջանակները սկսել են ներկայացնել իրենց առաջին ընդհանրական վերլուծականները, թե ինչ տվեց «արաքական գարունն» Արեւմուտքին, եւ ընթացիկ դինամիկան որքանով է համահունչ ամերիկյան ու եվրոպական տերությունների ռազմավարական շահերին:

Եթե փորձենք ի մի բերել, ապա գնահատականների գերակշիռ մասի համաձայն՝ վարչակազմերի փոփոխությունը թունիսում, Եգիպտոսում եւ ակնկալվող փոփոխությունը Լիբիայում, Եմենում ու Սիրիայում (այս համատեքստում նշվում է անգամ Իրանը) Միացյալ Նահանգների ու նրա գործընկերների կողմից իրականացվող աշխարհաքաղաքական նախագծի առաջին՝ այսպես ասած, «տեխնիկական» մասն է: Մինչդեռ, բուն նպատակն է դեռ Բուշ-կրտսերի վարչակազմի՝ 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո նախաձեռնած նախագծի շարունակությունը՝ միջազգային քաղաքական ու էներգետիկ անվտանգության առումներով կարելոր Մեծ Մերձավոր Արեւելքում ԱՄՆ ու նրա գործընկերների ներկայության ամրապնդումը:

Նախորդ տասնամյակում հիմնականում ռազմական բաղադրիչի միջոցով (պատերազմներն Աֆղանստանում ու Իրաքում) նշված նպատակին հասնելու քայլերը հանգեցրին իսլամական արեւելքում Միացյալ Նահանգների իմիջի, հետեւաբար՝ քաղաքական ազդեցության անկմանը: Մյուս կողմից, ժամանակի հետ մեկտեղ արեւմտյան դաշնակիցները ստիպված եղան աստիճանաբար հրաժարվել ռազմական բաղադրիչից: Նախ, որովհետեւ վերջինիս արդյունավետությունը միայն նվազում էր, իսկ հատկացվող միջոցները շարունակաբար աճում էին: Եվ երկրորդ՝ իսլամական արեւելքից զորքերի տուն վերադարձը դարձավ արեւմտյան երկրների ներքաղաքական պայքարի հիմնական հարցերից մեկը: Ի վերջո, անգամ ԱՄՆ-ը հայտարարեց Իրաքից ու Աֆղանստանից իր ռազմուժի դուրսբերման ժամկետները:

Անշուշտ, արաքական հեղափոխությունների ալիքի հիմքում նախնաեւառաջ պետք է դնել օբյեկտիվ պատճառները, որովհետեւ առանց այդ պատճառների ոչ մի «տեխնոլոգիա» չէր աշխատի: Սակայն ակնառու

էին նաեւ արեւմտյան երկրների շահագրգռվածությունն ու քայլերը՝ հնարավորության չափով սկզբնավորել հեղափոխական շարժումները, աջակցել դրանց եւ ուղղորդել¹:

Հատկանշական է, որ ժամանակային առումով «արաբական գարունը» նախորդեց Իրաքից ու Աֆղանստանից արեւմտյան կոալիցիայի ռազմուժի դուրսբերմանը: Այդ կապակցությամբ ամերիկյան ու եվրոպական փորձագետների գնահատականն է, որ արեւմտյան տերությունների կողմից փորձ է արվում «կոշտ ուժը» փոխարինել «փափուկ ուժով»², իսկ «արաբական գարունն» էլ երկարատեւ հեռանկարում պետք է հանգեցնի Արեւմուտքի ու դեմոկրատական արժեքների հետ հնարավորինս կապված վարչակազմների առաջացմանն իսլամական արեւելքում: Ինչ վերաբերում է ներկային, ապա արդեն այսօր տեսանելի է առաջին արդյունքը՝ ամերիկյան քաղաքականությունն «արաբական փողոցի» կողմից այլեւս ընկալվում է նոր՝ բարենպաստ լույսի ներքո:

Հարկ է նշել, որ նման նախագիծը նորություն չէ արեւմտյան ռազմավարության համար: Ըստ էության, նույն մոտեցումը ցուցաբերվեց երկրորդ աշխարհամարտից հետո եվրոպայում ու Հեռավոր Արեւելքում, երբ «կոշտ ուժին» հաջորդեց «փափուկը», որի միջոցով էլ խնդիր դրվեց երկարատեւ ժամանակահատվածում ապահովել ԱՄՆ ու նրա դաշնակիցների ներկայությունը տեղերում: Նույնը մենք տեսանք սառը պատերազմի ավարտից հետո՝ Արեւելյան եվրոպայում եւ հետխորհրդային տարածքում:

Հնարավոր է, նախագիծն ունի նաեւ հետեւյալ առանձնահատկությունը՝ զուգահեռաբար կամ հաջորդիվ իրականացնել տարածաշրջանի երկրների սահմանների վերածելումը, որը նույնպես կարող է անհրաժեշտություն լինել, եթե նկատի ունենանք, որ խնդիր է դրվում նոր կարգ ու ազդեցություն հաստատել տեղերում: Օրինակ, դա հատկապես ակնառու դրսեւորվեց Հարավսլավիայում: Եվ այս համատեքստում հարկ է հիշել հինգ տարի առաջ՝ 2006թ. հունիսին, ամերիկյան հեղինակավոր «Armed Forces Journal»-ում լույս տեսած Ռալֆ Պետերսի սկանդալային նյութը՝ Մեծ Մերձավոր Արեւելքում պետությունների սահմանների վերածելման մասին:

Ռուսաստանի պարագան

«Արաբական գարունը» տարբեր կերպ արձագանքեցին տարածաշրջանում: Ուշագրավ է, որ տարածաշրջանային բոլոր տերությունները՝ Իրանը, Թուրքիան, Իսրայելը եւ Սաուդյան Արաբիան, ի սկզբանե

բացասաբար կամ առնվազն զգուշավորությամբ մոտեցան մեկնարկած գործընթացին:

Չնայած Թուրքիան սկզբում նույն կեցվածքն ուներ, սակայն բավական կարճ ժամանակ անց Անկարայի դիրքորոշումը փոխվեց, եւ այնտեղ հնարավորություն տեսան օգտագործել նոր իրավիճակը՝ տարածաշրջանում սեփական ազդեցությունը մեծացնելու համար: Թուրքիայի ակտիվությունը սկսեց անհանգստացնել անգամ Ռուսաստանին, որն առանց այդ էլ դժվարին կացության առջեւ կանգնեց «արաբական գարնան» հետեւանքով: Քանի որ այն երկրները, որոնց հետ վերջին տարիներին ձեռք բերված ռազմաքաղաքական ու տնտեսական պայմանավորվածությունների միջոցով Մոսկվան փորձում էր առաջ տանել իր մեծ մերձավորարեւելյան քաղաքականությունը՝ Սիրիա, Լիբիա, Իրան, հեղափոխական շարժումների արդյունքում կամ թուլացել են, կամ մոտենում են վարչակազմերի փոփոխությանը:

Ինչ վերաբերում է թուրքական ակտիվությանը, ապա ռուսական փորձագիտական զնահատականների համաձայն, «արաբական գարունը» կարող է շարունակել սառը պատերազմից հետո տարածաշրջանում Մոսկվայի ազդեցության անկումը: Եվ այդ առումով նոր մտահոգություն է Անկարան: Վերջինս դեռ մինչեւ հեղափոխական շարժումների ի հայտ գալը սկսել էր ակտիվորեն աշխատել երկար ժամանակ ռուսական ազդեցությամբ աչքի ընկնող երկրների հետ՝ Սիրիա, Լիբիա, Պաղեստին, իսկ ներկայում էլ փորձում է օգտվել նոր հնարավորություններից՝ նշված պետություններում իր ազդեցությունը մեծացնելու համար, այսպես ասած, փորձելով զբաղեցնել ռուսական «ниша»-ն:

Մինչդեռ, «արաբական գարնան» սկզբնական փուլում Ռուսաստանը կարծես թե նույնպես հանդես էր գալիս շահողի դերում:

Նախ՝ ի տարբերություն արեւմտյան երկրների, Ռուսաստանը չի գտնվում երկու պատերազմների մեջ (Աֆղանստան, Իրաք), ինչը հնարավորություն ստեղծեց, օգտագործելով արեւմտյան տերությունների համար փաստացի երրորդ պատերազմը հանդիսացող լիբիական ճգնաժամը, նույն այդ տերություններից որոշ հարցերում զիջումներ կորզել:

Երկրորդ՝ արաբական հեղափոխությունների արդյունքում նավթի միջազգային գինը տարվա սկզբի համեմատ աճեց մոտ 20%-ով, ինչը կարելի է միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամից դեռ ամբողջովին չապաքինված ռուսական տնտեսության համար (մանավանդ, եթե հաշվի առնենք, որ ամիսներ անց Ռուսաստանում սպասվում են խորհրդարանական ու նախագահական ընտրություններ):

Երրորդ՝ լիբիական ճգնաժամի հետեւանքով աշխատանքը դադարեցրեց Լիբիան Իտալիային կապող «Green stream» գազատարը, որը տարեկան շուրջ 11 մլրդ մ³ բնական գազ էր մատակարարում կապույտ վառելիքի սպառման ծավալով Եվրոպայում երրորդ տեղը զբաղեցնող Իտալիային: Այդ հանգամանքը ստիպեց Հռոմին ավելի շատ գազ գնել «Газпром»-ից, ինչը դարձյալ տնտեսական օգուտներ է բերում Մոսկվային:

Չորրորդ՝ արաբական հեղափոխություններն ինչ-որ ժամանակ խնդիրներ հարուցեցին իսլամական Արեւելքից էներգակիրների մատակարարման գործում, ինչը հնարավորություն ընձեռեց Ռուսաստանին Եվրոպայի առջեւ ընդգծել նավթի ու գազի կայուն մատակարարողի իր դերը:

Այդքանով հանդերձ, ինչ վերաբերում է բուն մերձավորարեւելյան գործերին, ապա ռուսական փորձագիտական գնահատականների պատկերացմամբ՝ Մոսկվայի համար գալիս են դժվարին ժամանակներ: Դա են հուշում նաեւ Ռուսաստանի վերջին քայլերը:

Չնայած մարտի կեսերին Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինն արեւմտյան երկրների ռազմական կամպանիան Լիբիայում համենատեց միջնադարյան խաչակրաց արշավանքի հետ, սակայն արդեն մայիսի վերջին ֆրանսիական Դովիլում կայացած Մեծ ութնյակի հանդիպումներից հետո Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը հայտարարեց, թե Մուամար Քադաֆին պետք է հեռանա, իսկ Մոսկվան էլ պատրաստ է միջնորդական առաքելություն ստանձնել արեւմտյան երկրների, լիբիացի ապստամբների ու Քադաֆիի վարչակազմի միջեւ:

Էլ ավելի ուշագրավ զարգացում տեղի ունեցավ Սիրիայի պարագայում: Նախ՝ հունիսի սկզբին Ռուսաստանը կանխեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Սիրիայի իշխանություններին քննադատող բանաձեւի ընդունումը³, եւ իսրայելական հետախուզական տվյալների համաձայն՝ շարունակում է այդ երկիր առաքել զենք-զինամթերք: Բայց արդեն նույն ամսվա կեսերին Մոսկվայում, Ռուսաստանի խորհրդարանի վերին պալատի Միջազգային հարաբերությունների հանձնաժողովի նախագահ ու Աֆրիկայում Ռուսաստանի նախագահի հատուկ բանագնաց Միխայիլ Մարգելովի մակարդակով ընդունում են սիրիական ընդդիմության ներկայացուցիչներին եւ նրանց հետ բանակցում Սիրիայում ստեղծված իրավիճակի շուրջ:

Մի կողմից, Ռուսաստանի նշված քայլերն ուղղված են տարածաշրջանի երկրներում փոփոխություններին ընդառաջ սեփական ռազմաքաղաքական ու տնտեսական ներկայությունը հնարավորինս պահպանելուն, մյուս կողմից՝ Մոսկվայի համար երեւան է գալիս առանցքային

գործընկերների հարցը. եթե տարածաշրջանը ենթարկվում է մասշտաբային փոփոխությունների, ապա ի՞նչ տիպի ուժերի ու հետեւաբար՝ ո՞ր երկրների հետ պետք է գործակցի Ռուսաստանը:

¹ Չնայած արեւմտյան լրատվամիջոցների եւ անգամ պաշտոնյաների կողմից արված բազմաթիվ հավաստիացումներին, թե Եգիպտոսի նախագահ Յոսեֆ Մուբարաքը հրաժարական է ներկայացրել, սակայն ոչ ոք այդպես էլ չտեսավ այդ կադրերը: Չայտնի է, որ Մուբարաքի հրաժարականի մասին հայտարարեց այդ երկրի վարչապետը: Սա հիմք տվեց կարծելու, որ Եգիպտոսում ի վերջո տեղի է ունեցել ռազմական հեղաշրջում՝ ոչ առանց արեւմտյան աջակցության:

Փետրվարի վերջին – մարտի սկզբին Լիբիայում, Սիրիայում ու Եմենում բռնկված ժողովրդական հուզումներին զուգահեռ՝ նմանատիպ հուզումներ սկսվեցին Բահրեյնում, Չորդանանում եւ Սաուդյան Արաբիայում: Բայց ի տարբերություն առաջին երեք երկրների՝ ԱՄՆ գործընկեր հանդիսացող միապետություններում հեղափոխական ալիքը չարժանացավ արեւմտյան տեղեկատվական ռեսուրսների ու պաշտոնյաների երկարատեւ ուշադրությանը, չնայած, օրինակ, Բահրեյնում եւ Սաուդյան Արաբիայում իրադարձություններն արյունալի զարգացումներ ունեցան:

² Ի դեպ, իսլամական արեւելքում կիրառվող «փափուկ ուժի» համատեքստում իրենց առանձնահատուկ տեղն ունեն տեղերում ստեղծված՝ «հարազատ» ինֆորմացիոն ռեսուրսները, օրինակ՝ «Ալ-Ջազիրա» (Կատար) ու «Ալ-Արաբիա» (Արաբական Միացյալ Էմիրություններ) հեռուստաընկերությունները: Ուշադրություն է գրավում այն, որ տարածաշրջանում քաղաքական ազդեցությամբ աչքի չընկնող պետություններում համեմատաբար վերջերս ստեղծված ինֆորմացիոն այդ ռեսուրսները կարողացան մեծ հաջողությամբ ինտեգրվել ու իրենց տեղն ունենալ միջազգային տեղեկատվական դաշտում (ուր, ինչպես հայտնի է, գերիշխում են արեւմտյան ռեսուրսները), ինչը նման հաջողությամբ չի ստացվում անգամ միջազգային քաղաքականության մեջ կարեւոր դերակատարություն ունեցող տերությունների մոտ՝ Ռուսաստան, Չինաստան, ՅՈւԷՍ, Բրազիլիա: Պատահական չէ, որ այդ ռեսուրսների ստեղծման ու կառավարման գործում ակտիվորեն ներգրավվեցին արեւմտյան առաջատար մասնագետներ, եւ որ արաբական հեղափոխությունների ժամանակ վերջիններս լայնորեն ներկայացնում էին ժողովրդական հուզումները:

³ Չարկ է հիշեցնել, որ Սիրիայում է գտնվում տարածաշրջանում ռուսական միակ ռազմաբազան՝ Տարտուս նավահանգստում:

ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԱՔԱԿԱՆ «ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՍԻՆ

Յու. Շչեգլովի

Թունիսի, Եգիպտոսի, Սիրիայի եւ մյուս արաբական երկրների հեղափոխություններն արդեն ստացել են «ինտերնետային» անվանումը: Համաշխարհային ցանցն ապացուցեց իր արդյունավետությունը բողոքական տրամադրությունների կազմակերպման եւ համակարգման գործում: Ինտերնետի միջոցով համաշխարհային հասարակական կարծիքը տեղեկանում է այս կամ այն երկրում իրական անցքերի վերաբերյալ, իսկ հաճախ կազմում է նաեւ միակ եւ ոչ ճշմարտացի կարծիքն այն մասին, թե ինչ է այնտեղ կատարվում:

Հատ փորձագետներ լրջորեն զարմացած էին արաբ օգտվողների մակարդակից, որոնք ռեկորդային կարճ ժամկետներում կարողացան ցանցում ստեղծել ցույցերի կառավարման արդյունավետ համակարգ: Ընդ որում, փորձագիտական ընկերակցությունից շատ քչերին հետաքրքրեց, թե որքանով է նման մակարդակն օրգանական: Կամ այլ խոսքերով՝ ինչ է կանգնած այդ արագության հետեւում: Ցանկացած արագության հետեւում միշտ կանգնած են լինում գործընթացի լավ կազմակերպումը եւ որակյալ կադրերը: Տվյալ դեպքում մենք տեսնում ենք նման կազմակերպվածության հոյակապ օրինակ, որն, այնուամենայնիվ, դրդում է լուրջ մտորումների, թե որքանով են ամերիկյան վարչակազմի գործողությունները համակարգված եւ ծառայում ընդհանուր նպատակի:

Դատեք ինքներդ. Վաշինգտոնը Հոսնի Մուբարաքի վարչակարգի աջակցության համար, որին համարում էր Մերձավոր Արեւելքում իր ներկայության եւ ազդեցության հիմնական սյուներից մեկը, հսկայական ֆինանսներ է ծախսել՝ սկսած անմիջական օգնությունից (եգիպտական տնտեսության յուրաքանչյուր երրորդ դոլարն ամերիկյան է), վերջացրած ռազմական առաքումներով: Ընդ որում, այդ նույն վարչակարգի տապալման գործում հիմնական դերը խաղացին դարձյալ ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորվող ոչ կառավարական կազմակերպությունները (ՈԿԿ): Անշուշտ, ՈԿԿ-ների գործունեության եւ ռազմատեխնիկական համագործակցության վրա կատարված ֆինանսական ծախսերն անհամաչափելի

են, սակայն դա բնավ էլ չի նշանակում, թե այդ տարբերությունն ազդում է արդյունավետության վրա:

Այժմ բացարձակապես ճշտորեն հաստատված փաստ է, որ Եգիպտոսի «Ապրիլի 6» երիտասարդական շարժման առաջնորդներն ուսուցանվել են Սերբիայի «ոչ բռնի հեղափոխությունների» դասընթացներում: Դրանք կազմակերպվել էին տեղի «Կիրառական ոչ բռնի գործողությունների եւ ռազմավարությունների կենտրոն» (ԿՈԲԳՈԿ) ՈԿԿ-ի կողմից: Վերջինս ստեղծվել է Միլոշեվիչի տապալումից հետո եւ այժմ հանդիսանում է հիմնական «ուսումնական հաստատությունը» բազմաթիվ երկրների հեղափոխականների համար՝ սկսած Վրաստանից եւ ավարտած Վենեսուելայով: ԿՈԲԳՈԿ «տանիքի» տակից դուրս եկած շարժումներն անչափ նման են ե՛լ անվանումներով («Բավ է»), ե՛լ խորհրդանիշներով, ե՛լ, բնականաբար, բողոքի կազմակերպման եւ այդ նպատակով ինտերնետի օգտագործման ձևերով: Այդ նույն Եգիպտացիներն իրենց ցույցերի ժամանակ տանում էին ԿՈԲԳՈԿ տարբերանշանով պաստառներ, իսկ նրանց շարժումը, հանգամանքների արտասովոր բերումով, նույնպես կոչվում էր «Բավ է»:

Իսկ ո՞վ է ֆինանսավորում ԿՈԲԳՈԿ-ը: Դրանք ամերիկյան երկու կազմակերպություններ են՝ Միջազգային հանրապետական ինստիտուտը (ՄՅԻ) եւ Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (ԱԺԻ): Կազմակերպություններ, որոնց բյուջեն, մասնավոր նվիրատվությունների հետ միասին, զգալի չափով համալրում են ԱՄՆ կառավարությունը՝ ժողովրդավարության ազգային հիմնադրամի միջոցով, Պետդեպարտամենտը եւ Միջազգային զարգացման գործակալությունը: Ֆինանսական հովանավորներից անհրաժեշտ է նաեւ նշել հանրաճանաչ «Ֆրիդոմ հաուս»-ը: Ի դեպ, ՄՅԻ-ն ստեղծվել է նախագահ Ռեյգանի նախածեռնությամբ եւ սերտորեն կապված է հանրապետականների հետ, իսկ նրա ղեկավարների մեջ ամենուրեք պաշտոնաթող զինվորականներ եւ հատուկ ծառայությունների աշխատակիցներ են: Տարօրինակ խառնուրդ: Ընդ որում, ֆրանսիական հետախուզությունը հստակ կապ է անցկացնում ՄՅԻ եւ ԱՄՆ կենտրոնական հետախուզական վարչության (ԿՅՎ) միջեւ:

«Ապրիլի 6» շարժման հիմնադիրներից Իսրա Աբդել Ֆաթահն, օրինակ, ուսուցում է անցել «Ֆրիդոմ հաուս»-ի դասընթացներում, որը նույնպես ֆինանսավորվում է պետության կողմից: Փաստորեն, բոլոր Եգիպտացի ապագա հեղափոխականները եղել են 2008թ. Նյու Յորքում կազմակերպված «ժողովրդավարության առաջխաղացման համար»

տեխնոլոգիական եւ սոցիալական ցանցերի օգտագործման մասին սեմինարի մասնակիցներ: Եզիպտական երիտասարդական ընդդիմության ղեկավարներից Ֆաթին հետո հայտարարեց, որ «ուսուցումը թույլ տվեց իմանալ, թե ինչպես ստեղծել կոալիցիաներ եւ կազմակերպել նրանց գործունեությունը»:

Այս ամենը հիմք հանդիսացավ արաբական աշխարհի տապալված կամ դեռ չտապալված առաջնորդների համար՝ հայտարարելու, որ արաբական «հեղափոխությունները» կազմակերպվել ու ֆինանսավորվել են արտասահմանից:

Անշուշտ, խոսել այն մասին, թե արաբական երկրներում բողոքները բացառապես «արտասահմանյան ուժերի» մեղքով են, միամտություն է: Բայց այն, որ տարերային բողոքը, շնորհիվ պատրաստված ակտիվիստների, շատ արագ կարողացավ կառուցվածք ստանալ եւ ինքնակազմակերպվել, փաստ է:

Ինչպես նկատեցինք, առկա է լիակատար հակասություն ԱՄՆ վարչակազմի պաշտոնական ուղեգծի (օրինակ, Մուբարաքին աջակցելու համար Վաշինգտոնի կողմից տարեկան ծախսվել է 1.5 մլրդ դոլար) եւ ՈԿԿ-ների «քայքայիչ» գործողությունների միջեւ, որոնք «սնվում» են այդ նույն պետությունից: Բահրեյնի իշխանություններն, օրինակ, 2009թ. արգելեցին ԱժԻ-ի էմիսարների մուտքը, որոնք, նրանց տվյալներով, սատարել ու ֆինանսավորել էին շիա ընդդիմության առաջնորդներին. այն ընդդիմության, որին ոչ առանց հիմքի համարում են «իրանամետ» եւ որը երկու տարի անց քիչ մնաց տապալեր կառավարությունը: Եվ կտապալեր, եթե չլիներ Սաուդյան Արաբիայի եւ Արաբական Միացյալ Էմիրությունների ուղղակի ռազմական միջամտությունը: Շատ տարօրինակ է. մի կողմից՝ ջանալ աջակցել արաբական վարչակարգերին, իսկ մյուս կողմից՝ ստեղծել այդ վարչակարգերին ընդդիմություն՝ օբյեկտիվորեն օգնելով ակնհայտ ոչ դաշնակցին՝ ի դեմս Թեհրանի:

Այս ֆենոմենի միակ բացատրությունը, մեր գնահատմամբ, ամերիկյան ուժայինների՝ ՈԿԿ-ները եւ ընդդիմության ակտիվիստներին իրենց նեղ գերատեսչական նպատակների համար օգտագործելու փորձերի մեջ է: Այսինքն՝ խաղալ բոլոր ճակատներում եւ «ուշադրությամբ» շրջապատել քաղաքական սպեկտրի բոլոր շերտերը: Այլ խոսքերով՝ ամերիկացիներն իրենց հաշիվ տալիս են, որ արաբական երկրների վարչակարգերը հավերժ չեն եւ ջանում են պատրաստել նոր, իրենց հավատարիմ քաղաքական գործիչների սերունդ: Չէ՞ որ այդ նույն «Ֆրիդոմ հաուս»-ի (որը մինչեւ 2005թ. գլխավորել է ԱՄՆ ԿՀՎ նախկին

տնօրենն Վուլսին) պաշտոնական նպատակներից մեկն «ամերիկյան կենսակերպի եւ արժեքների քարոզումն է»:

Սակայն, ինչպես սովորաբար լինում է գլոբալ նախագծերի կենսագործման ժամանակ, իրավիճակը դառնում է առավել քիչ կառավարելի: Եվ Բահրեյնի օրինակը դրա պերճախոս ապացույցն է: ՈԿԿ-ները վերածվում են ինքնուրույն օրգանիզմի, որոնց էմիսարները ճարակորեն յուրացնում են բյուջեն, ընդ որում՝ հաճախ խորամուխ չլինելով տվյալ երկրների խնդիրների մեջ: Իսկ ինչի են նման բաները հանգեցնում՝ կարելի է հասկանալ թեկուզ Ուսամա բեն Լադենի օրինակից, որը «վերահսկելիից» շատ արագ վերաորակավորվեց ամենագլխավոր թշնամու: Արաբական «հեղափոխություններով» պատմության մեջ, ամենայն հավանականությամբ, դարձյալ իշխանության կգան ոչ թե սերբական նախապատրաստական կենտրոնի շրջանավարտները, այլ իսլամիստները՝ այս կամ այն կատարմամբ: Լավ է, եթե «մեղմ»:

iimes.ru

**ՉԱՍԱՐԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՔԱՆԴՈՒՄ.
«ՉԱՆՈՒՆ ԻՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ»**

Կոնստանտին Գորդեել

Գլոբալացման գործընթացների եւ նրանց կողմից ստեղծված ֆինանսատնտեսական ճգնաժամի օբյեկտիվ բնույթն ամենեւին չի բացառում դրանց արհեստածին լինելը եւ տեղի ունեցածի մեջ դիտավորության առկայությունը: Այսօր գլոբալ տնտեսությունում ծագած եւ, մասնավորապես, Եվրոպայի պետությունների գլխին դանդաղան սրի պես կախված խնդիրները միանգամայն կարող են դիտվել որպես գլոբալ ֆինանսական խմբերի երկարատեւ, կեսդարյա խաղերի արդյունք:

Ներկայիս համաշխարհային իրադրությունը գրեթե 50 տարի առաջ գլոբալ վերնախավերի կողմից սկսված եւ համաշխարհային *տեխնոտրոն ցանցային հասարակության* կառուցմանը նպատակաուղղված նախագծի իրագործման միջանկյալ արդյունքն է: Այդ նախագիծը ե՛լ արտասովոր լայնամասշտաբ է, ե՛լ ծայրաստիճան բարդ, ե՛լ բազմակողմանի, ուստի ներառում է բավական թվով զանազան «քայլեր», որոնք ապահովում են այն փոփոխությունների անշրջելիությունը, որոնցում ներգրավված է ողջ մարդկությունը:

Այդպիսի «քայլերից» է հանրային քննարկմանը ներկայացված «նոր աշխարհակարգի» տնտեսական կառուցվածքի նկարագրությունների տեղեկատվական թերիությունը: Բանն այն է, որ բոլոր տնտեսական մոդելները՝ ինչպես նեոպահպանողական, այնպես էլ մոնետարիստական, որոնց շուրջ ինքնամոռաց բանավիճում են մեկնաբաններն ու փորձագետները՝ փորձելով ձեւակերպել ապագայի կանխատեսումները (փաստորեն՝ կանխագուշակել այն), հաշվի չեն առնում երկու բան:

Առաջին. տնտեսավարման ողջ համակարգը դիտարկվում է առանց հաշվի առնելու հասարակական կառուցվածքում տեղային ընթացիկ փոփոխությունները: Եվ երկրորդ. տնտեսական մոդելների նկարագրություններից հանվում է պատմական ժամանակը, որի անտեսումը (այն էլ վերապահմամբ) թույլատրելի է սոսկ այն դեպքում, երբ սոցիալական փոփոխությունների արագությունը խիստ չնչին է (ինչպես դա եղել է, օրինակ, 2-3 հարյուրամյակ առաջ):

Ընդ որում, ոչ ոք առանձնապես չի էլ թաքցնում, որ երկու ուղղությունների՝ պահպանողական եւ ազատական, տեսականացումը՝ «նեո» նախա-

ծանցի հավելմանը, որը ներկայացված է «հանրային լայն քննարկման», հանդիսանում է ժամանակակից պայմաններին հարմարեցված տնտեսության մասին հին, դասական պատկերացման զարգացում: Այլ բառերով՝ ժամանակակից տնտեսական համակարգն, ըստ էության, նկարագրում են երկդարյա վաղեմության կատեգորիաներում՝ պատկերելով իբրև կայուն գործող մեխանիզմ՝ «բաց» կամ «փակ», կախված մոդելի պայմաններից:

Դեռևս 1996թ. գերմանական հեղինակավոր «Շպիգել» շաբաթաթերթի խմբագիրներ Մարտինը եւ Շումանը հանդես եկան ուսումնասիրությանը, ուր մեծ քանակությամբ փորձական նյութերի հիման վրա ցույց տվեցին «գլոբալ վերակառուցման» բացասական կողմերը, որոնք արմատապես չեն տեղավորվում տնտեսական մոդելներից բխող բարեգութ պատկերի մեջ: Այսինքն՝ «հին տնտեսական պարադիգման» արդեն այն ժամանակ է կեղծ արդյունքներ տվել եւ իրադրության կրիտիկական սրման ընթացքում պահանջել է իր փոխարինումը:

Մարտինի եւ Շումանի աշխատությունում նշված միտումներն իրենց ողջ խորությամբ դրսևորվեցին արդի գլոբալացված աշխարհում: Բացառությամբ, թերևս, գերմանացի հեղինակների կողմից արված սոսկ առաջին եւ, հավանաբար, ամենակարեւոր դիտարկման, ըստ որի՝ գլոբալացումն իր հետեւից բերում է սոցիալական կառուցվածքի փոփոխություն՝ համաձայն «Պարետոյի բաշխման»: Ընդ որում, ինչպես պարզեցին «Շպիգելի» խմբագիրները «գլոբալացման հայրերի» հետ շփման ընթացքում, կատարվածը նրանց համար հանդիսանում է ամենեւին ոչ պատահական, այլ միանգամայն սպասված եւ անգամ նպատակային արդյունք:

Սոցիոլոգիայում եւ էկոնոմիկայում որպես «Պարետոյի բաշխում» նկարագրվում է այն իրավիճակը, երբ համակարգում կուտակային փոփոխությունները հանգեցնում են նրա բաղադրիչների միջեւ սեփական պաշարների վերաբաշխման՝ որոշակի երկրաչափական պրոգրեսիայով, օրինակ՝ 20/80: Հասարակության դեպքում դա նշանակում է, թե որքան էլ այն հարստացած (կամ աղքատացած) լինի, որքան էլ բնակչությամբ աճած կամ նվազած լինի, նրա 20 տոկոս անդամներին է միշտ պատկանելու միամուգար հարստության 80 տոկոսը: Նույնն է նաեւ իշխանության, ակտիվիստների, գործունակների եւ այլնի բաժանման դեպքում, այսինքն՝ այն ամենի, ինչը կարող է առնչվել ինքնակազմակերպման գործընթացներին:

Այստեղից պարզ է, թե ինչու գլոբալացման՝ որպես «20/80 հասարակության» կառուցման նախագծի, հրապարակային քննարկման վրա

խստագույն տաբու է դրված: Մի կողմից՝ աշխարհի միավորումը միասնական ֆինանսատնտեսական համակարգի մեջ՝ փակելով սոցիալական տարածությունը, դարձրել է նրան փակ: Պարտվածների համար այլևս ազատ տեղ կամ բնագավառ չի մնացել, որտեղ նրանք կարողանան գաղթել եւ «սկսել կյանքը սկզբից»: Իսկ մյուս կողմից՝ «մեծ տնտեսական խաղում» պահպանվել է «ազատությունը». նրա էներգիայի աղբյուրները նախկինի պես մնացել են արտաքին եւ (ծայրահեղ դեպքում՝ առայժմ) անսպառ են: Եվ հաղթողների համար մրցանակն այդպես էլ շարունակում է մնալ նրանց վերահսկողության տակ գտնվող սոցիալական ու տնտեսական բոլոր ոլորտների համընդհանուր մոնոպոլացումը եւ մոլորակի վրա առկա ողջ հարստության տիրումը: Նաեւ բնական է, որ այդ մասին նրանց տեղյակ պահելը, ուլքեր գլոբալ խաբեության արդյունքում դատապարտված են մնալու առանց գոյության միջոցների, խաբեբաների համար, որոնք արդեն իրենց ձեռքում են կենտրոնացրել իշխանության եւ մարդկության սեփականության ճնշող մասը, ոչ մի իմաստ չունի:

Նրանց շրջանակը, որոնց գլոբալ խարդախությունը նետել է գոյության ծայրը, նկարագրվում է պարզ՝ «գրեթե ողջ մարդկությունը»: Բիլդերբերգյան ակումբի (որի անդամների հետ են, ոչ առանց հիմնավորման, կապում գլոբալացման նախագծի կառավարումը) նախորդ տարվա նիստից (բնականաբար, տեղեկատվական արտահոսքերի միջոցով) իմանում ենք, որ «նրանց գնահատմամբ», աշխարհում հաջողակ մարդկանց թիվը կազմում է շուրջ 150 մլն (տան անդամների հետ՝ 250-280 մլն), այսինքն՝ երկրագնդի գրեթե 7 միլիարդանոց բնակչության 4%-ը:

Իսկ մնացածը: Մնացածը, բնականաբար, ընկնում են «պարտվածների», «ավելորդների», «պահեստայինների» կատեգորիայի մեջ եւ... ենթակա են, եթե ոչ անմիջական կրճատման, ապա, ծայրահեղ դեպքում, դուրսնդման սոցիալական դեգրադացման ոլորտ: Ամայացման են դատապարտվում ամբողջ աշխարհագրական շրջաններ, եւ ոչնչացման տակ է ընկնում ինքն իսկ պետականության իմստիտուտը, որը գլոբալ ֆինանսական խմբերի եւ անդրազգային ընկերությունների ազդեցության ոլորտների միջեւ բաժանված աշխարհում դադարում է լինել անհրաժեշտ:

Բիլդերբերգյան ակումբի վերջին նիստը, որն անցկացվել էր 2011թ. հունիսի 9-12-ը շվեյցարական Սենտ Մորիցե քաղաքում, հայտարարված թեմաներից բացի (վթարը «Ֆուկուսիմայում», ԱԷԿ-ների փակումը Գերմանիայում, հեղափոխություններն արաբական աշխարհում, ինտերնետի խնդիրները), կենտրոնացել էր, ինչպես ենթադրում են, «Եվրոպայի ոչնչացման» (Deutsche Bank-ի գլխավոր տնօրեն Յ. Ակերմանի պնդմամբ) եւ համաաշխարհային տնտեսական ճգնաժամի արհեստական շարունակ-

ման վրա՝ ազգային տնտեսությունների հետագա թուլացման եւ անդրազգային կառավարման համակարգի ստեղծման նպատակով... Անշուշտ, այս ամենը սոսկ ենթադրություն է՝ Բիլդերբերգյան ակումբի անդամների որոշումները խիստ գաղտնի են, սակայն տեղի ունեցող իրադարձությունները լիովին տեղավորվում են այդ հենքի մեջ:

Իրոք, 2011թ. թեժ գարնան կիզակետում հենց Եվրոպան է: Նրա հիմնական «մեղքը», գլոբալ նախագծի տեսանկյունից, սոցիալական լուրջ երաշխիքներով պաշտպանված 400 միլիոնանոց եվրոպական բնակչության «չափազանց» բարձր կենսամակարդակն է: Հին աշխարհի պետություններն ու բնակչությունը դեռեւս «հնաոճ» կառուցվածք ունեն, լի են ժողովրդավարա-ազատական պատրանքներով, եւ ...նրանք տանուլ տալու կամ կորցնելու բան ունեն:

Կարելի է առանձնացնել մի քանի ուղղություն, որոնցով հասցվելու է եվրոպական ամրոցը խորտակելու հարվածը. 1) *ֆինանսատնտեսական (Եվրոպայի երկրների տնտեսությունների քայքայում)*, 2) *քաղաքական (Եվրամիության փլուզում)*, 3) *սոցիալական («կառավարելի քաոսի» սանձազերծում հեղափոխությունների արտահանման, մոսուլման գաղթյալների ներհոսքի, բնակչության թմրադեղման միջոցով)*:

Առաջին ուղղությունն ամենեւին էլ չի սահմանափակվում եվրոյի վիժեցմամբ: Առհասարակ, տարադրամային դեֆոլտը չի կարող սահմանափակվել Եվրոպայի երկրներով: Դեֆոլտը չորս տարի առաջ սկսված ֆինանսական ճգնաժամի անմիջական հետեւանք է եւ այս կամ այն չափով վերաբերում է արտարժուրթային բուրգի բոլոր մասնակիցներին՝ ստեղծված այնպիսի մասնավոր կրպակի տերերի կողմից, ինչպիսին է ամերիկյան Դաշնային պահուստային համակարգը: Ըստ էության, մոլորակի գլխավոր դրամամիջների թողարկողն ինքն է ընդհուպ մոտեցել նրան, որպեսզի հայտարարի իր անվճարունակության մասին: Եվ նրա այդ սնանկացումը, որի ողջ ծանրությունը պետք է կրի ԱՄՆ բնակչությունը, հանդիսանում է տրամաբանական ավարտը քառասունամյա գլոբալ խարդախության՝ մինչեւ իր վերջին ժամը շահութաբեր նրանց համար, ովքեր այն կազմակերպել են:

Հունաստանն ու եվրոպական մյուս հետնապահ պետությունները հայտնվեցին «քավության նոխազների» թվում սոսկ այն պատճառով, որ՝ 1) չկարողացան դիմանալ մրցակցությանն իրենց ներքին պաշարների հաշվին, որոնց պոմպի նման ներս էր քաշել գլոբալ կազինոյում («Պարետոյի բաշխում») մասնակցությունը, 2) այդ պետությունների սնուցումն «իրենց» գլոբալ ֆինանսական խմբերից ստացվող վարձավճարների հաշվին բավարար չգտնվեց, 3) պարզվեց, որ եվրոպական համադաշնության

քաղաքական համերաշխությունն այլևս չի ապահովում ԵՄ ամբողջականությունը:

Յուրաքանչյուրն, ըստ էության, ընկավ «ինքն իր համար» դրության մեջ եւ նախընտրեց «մեռնել միայնակ»: Ու եթե Յունաստանի հետ խնդրի առաջին փուլում դեռ ձայներ էին հնչում «դոմինոյի էֆեկտի», ԵՄ-ից Յունաստանի աղետալի կերպով դուրս գալու մասին, ապա հունիսի վերջին Եվրոպայի միասնական տնտեսության փլուզումը ձեւակերպվեց իբրեւ կարճաժամկետ կանխատեսում, եւ հնչեցին ուղղակի պահանջներ սնանկացածներին եվրոպական համադաշնությունից վտարելու մասին:

Աղքատացող, փլուզվող տնտեսությունը, որը հանգեցնում է, մի կողմից, ԵՄ քաղաքական ապահովագրման, իսկ մյուս կողմից՝ եվրոպական երկրներում սոցիալական ծրագրերի էլ ավելի կրճատման եւ բնակչության շերտավորման, ներկայացնում է Եվրոպայի վրա գլորվող առաջին, արտաքին ալիքը եւ դրսից կառավարվող քառսը: Ընդ որում, հասարակությունը պառակտող այս հարվածը հիմնականն է:

Ատլանտիկայում տեխնածին աղետի հետեւանքով կլիմայական պայմանների վատթարացումը, արաբական աշխարհում «կառավարելի քաոսի» կողմից ստեղծված նավթային ճգնաժամը, ճապոնական ԱԷԿ-ում վթարը, որը խախտեց ատոմային էներգետիկայի նկատմամբ վստահությունը եւ խորացրեց ածխաջրածնային խնդիրը, Յյուսիսային Աֆրիկայից գաղթյալների խմբերը՝ այս ամենը միասին ստեղծում են լուրջ սոցիալ-տնտեսական բեռ առանց այդ էլ բարդ կացության մեջ գտնվող Եվրոպայի ժողովուրդների համար: Սակայն, հիրավի աննախադեպ է հանդիսանում կենսաբանական դիվերսիան, որի ակնհայտ նպատակն էր Եվրոպացիների գյուղատնտեսության քայքայումը: Որքան հիվանդածին էլ որ լինի մեկ այստեղ, մեկ այնտեղ երեւացող ու անհետացող աղիքային ցուպիկի տեսակը, այն ի վիճակի չէ վերաճել պոտենցիալ համաճարակի եւ հանգեցնել բնակչության շրջանում եական զոհերի, սակայն միանգամայն կարող է վերածվել խուճապի, զցել գյուղմթերքների նկատմամբ պահանջարկը, հանգեցնել տնտեսության մի ամբողջ հատվածի փլուզման եւ հարուցել մանր արտադրողների վրդովմունքը: Ինչն իրականում արդեն եւ տեղի է ունենում:

Եվ այստեղ դիտարկվում է «կառավարելի քաոսի» երկրորդ ալիքի գրոհը, որին են դատապարտել Եվրոպացիներին: Որքան վատ է տնտեսությունը, այնքան շատ են դժգոհներն ինչպես սեփական աղետալի վիճակից, այնպես էլ կրճատվող սոցիալական ծրագրերից, եւ նույնքան բարձր է սոցիալական բողոքի կարգախոսների ներքո մարդկանց փողոց դուրս գալու պատրաստականությունը: Եվ արդեն դուրս են գալիս. ճիշտ է,

առայժմ այնտեղ, ուր ծագել է առավել մեծ լարվածությունը՝ Հունաստանում, Իսպանիայում: Սակայն սրընթաց է սկսվել աղետը: Արդեն գործի է դրվել գունավոր հեղափոխությունների մեխանիզմը՝ արաբական աշխարհում կազմակերպվածների օրինակով, «Հանուն իրական ժողովրդավարության», «Հանուն հեղափոխության՝ Թունիսից մինչև Սիրիա» կարգախոսներով:

Այն առայժմ խաղաղ բնույթ է կրում՝ նրա ժամանակը չի եկել, բայց չափազանց առերեսույթ է նրա գաղափարական բաղադրիչը. սեփական խնդիրները լուծել կոմունաների ասոցիացիայի միջոցով՝ հանելով կառավարությունների վրայից այդ խնդիրների առաջացման պատասխանատվությունը: Դժվար է մտածել գլոբալիստական նեոտրոցկիզմի առավել ընդգրկուն մարմնավորում, եւ ոչ մի կասկած չկա, որ այսօր առատորեն շաղ տրվող հեղափոխության վառելանյութը կբռնկվի, հենց որ տնտեսական իրավիճակը մոտենա վտանգավոր կրիտիկական սահմանին, իսկ երիտասարդությունը եւ աֆրո-արաբական լյունպենը, որ եվրոպա է ներմուծվում անկարգություններով լցված Մերձավոր Արեւելքի եւ Հյուսիսային Աֆրիկայի երկրներից, կապահովի սկսած հրդեհի լայնությամբ տարածումը:

Ահա քեզ ե՛ւ «կառավարելի քաոս», ե՛ւ երկրագնդի բնակչության կրճատում մինչեւ ցանկալի հարյուրավոր միլիոնները, ե՛ւ ազգային սեփականության՝ «օրենքով արդարացված» յուրացում. ամբողջը միասին:

fondsk.ru

03.07.2011

«ՄԱՐԶԻԿԸ ԴԱՌՆՈՒՄ Ե ՄԱՐՏԻԿ»*

1. Գաղութահայության դժբախտության, նրա անհամերաշխության, նրա ներքին իրերակերության պատճառներից մեկն էլ՝ իր ծոցի մեջ գործող կազմակերպությունների գաղափարախօսական եւ բւական տկարությունն է: Խորապէս ազդելու, պատկառանք, միութիւն, համերաշխութիւն պարտադրելու աստիճան եւ ո՛չ մէկն է բաւականաչափ զօրաւոր: Գոյութիւն ունեցողներից ամենահինը՝ Զոմընդմենը, իրաւ, է՛ ու կմնայ զուտ մարզական մի կազմակերպութիւն, որը երկուսուկէս տասնեակ տարիների ընթացքին չկարողացաւ հասկանալ, որ սպորտը մարմնակրթանք չէ միայն, այլ եւ Զայրենիքի ինքնապաշտպանութեան գործին սատարող մի զօրաւոր ազդակ: Մի նոր սերունդ, վտանգի՛ սերունդ, որը ոչ թէ միայն պաշտեր իր Ցեղը, այլեւ քաղաքականապէս ծառայէր ու մեռներ իր Զայրենիքի համար:

Զոմընդմենը եղաւ հոգեբանօրէն չէզօք, քաղաքականապէս դիմազուրկ, ու անտարբեր դէպի նոր ժամանակի բարձր պահանջները: Նա իր գործունէութեան մէջ դրեց նպատակի չնչինութիւն, հաստ սրունքներ, իդէազուրկ զբօսասիրութիւն: Մխալ հասկացած ու կիրարկւած սպորտը տանում է նարցիսիզմի - ինքնասիրահարութեան: Էականը հոմընդմենականի համար - դա սպորտային թատերականութիւնն է, ծափահարելու տենչը, ամբոխից խլած աժան դափնին: Նա չի հասկանում, որ բաւական չէ սիրել սպորտը - սպորտին պէտք է միացնել նաեւ սպարտականը, պէտք է զինւոր լինել, Ցեղի եւ Զայրենիքի զինւորը: Ուրիշ ազգերի մօտ մարզադաշտը հանդիսանում է նախադուռը ռազմադաշտի: Նրանց մօտ մարզարուեստը ծառայում է ռազմարուեստին, որով մարզիկը դառնում է մարտիկ: Այսօր ողջ աշխարհում - բոլոր պետութեանց մէջ մարզական եւ այլ կարգի դաստիարակութեան խնդիրը դրւում եւ լուծւում է Զայրենիքի եւ Ցեղի պաշտպանութեան խնդրի կապակցութեամբ: Ամէնուրեք սպորտին տրւած է ազգային բնոյթ: Մեզ մօտ միայն փոխառիկ սպորտը ազգային իդէօլօգիա չունի: Եւ հէնց այդ է պատճառը, որ մեզանում սպորտային գրականութիւն, մշակոյթ չէ ստեղծուում: Մեզանում դա

* Սույն գրութիւնը հատված է Գարեգին Նժդեհի նամակից՝ ուղղված ԱՄՆ Ցեղակրոն Ուխտերի հայտնի գործիչ, 1930-ական թվականներին Զ.Յ.Դ. ԱՄՆ կենտրոնական կոմիտեի անդամ Զովհաննես Զովհաննեսյանին:

կիրարկում է մեքենաբար: Հայ մարզականին ցայսօր յանցապարտօրէն պակասում է երեք բան - Հայաստանին եւ Հայ Ցեղին սպառնացող Մեծ վտանգի գիտակցութիւնը, Մեծ Նպատակը եւ Մեծ Նւիրումը - Ուխտը:

2. Նորահաս սերունդին վերաբերող ամէն կազմակերպութիւն - անկախ իր քաղաքական դաւանանքէն - եթէ աշխարհ եկած չէ ցեղի անունով - անպէտք է հայրենիքի համար: Նա, որ Ցեղակրօն չէ՝ ոյժի չի՝ վերածւիր: Նա, որ Ցեղակրօն չէ՝ կմնայ առանց մարտական խմորի, կմնայ անմարտունակ - ռազմիկ չի՝ դառնայ: Ռազմիկ, հրաշունչ ու յաղթական ռազմիկ լինելու համար բաւական չէ անգամ դաշնակցական լինելը, քաղաքականապէս անհրաժեշտ է դաշնակցական լինելը, նաեւ պատիւ է դա, բայց մեր դաշնակցական դաւանանքին պէտք է միացնենք ցեղի խռովքը, յաւիտենականի զգացումը, պաշտամունքը՝ կատարեալ մարտիկ դառնալու համար: Դաշնակցութիւնը չէ ունեցած մի հատիկ մարտիկ, որ ցեղակրօն, ցեղաշունչ, ցեղահոգ չլինէր: Անցեղաճանաչ ու անցեղապաշտ կազմակերպութիւնները - մասնաւորապէս նորահասին պատկանողները - հեշտութեամբ դառնում են ներքին չարիք, նրանք դիմամիկ նպատակի ու խանդավառիչ գործերի պակասի շնորհիւ դառնում են հոգեւոր ճահիճ, եւ այսպիսով թունաւորում իրենց մատղաշ անդամների միտքն ու զգացումը: Այդ ճահճացած կազմակերպութիւնները՝ իրենց մէջ առնելով ցեղի ջահել զաւակները՝ նրանց կտրում են ցեղի հոգեւոր կաթէն, որով եւ հեշտացնում վերջինների վատասերումը: Նրանք նմանում են այն հոտած ճահիճներին, որոնք առնում են իրենց մէջ գետ ու առուակների վճիտ ջրերը եւ հոտեցնում: Հայօրէն դաստիարակելու կարօտ ամէն էակ - մանուկ, պատանի, երիտասարդ - կարիք ունի իր յաւիտենական մօր ծօին, իր ցեղին: Արդ, թէ ինչո՞ւ պէտք է ողբալ ճակատագիրն այն բոլոր դժբախտների, որոնք դեռ միացած չեն Ցեղակրօնութեան: Պէտք է ողբալ այն բոլոր կազմակերպութեանց ապագան, որոնց հոգեւոր կեանքը լեցնում են փոքրիկ նպատակը, նոյնքան փոքրիկ գործերը եւ «կրիայի քայլերի» խղճուկ պրոպագանդը: Չէ՛ կարելի ջահել լինել - պատանի ու երիտասարդ լինել - եւ ցեղակրօն չլինել: Հոգեւոր ծերեր են նմանները: Ով ուզում է - սա պէտք է ընդունել որպէս օրէնք - ով ուզում է ոյժի վերածւել եւ իր ցեղի դիմադրական ոյժն աճեցնել՝ մի տեղ, մի՛ միայն մի տեղ ունի - Ցեղակրօն Ուխտերը:

Նժդեհ

1937, 7 յուն. Սօֆիա

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ֆեոդոր Լուկյանով ՈՐՔԱՆ Է ՏԵՎԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՍՏԱՏՈՒՄ-ՔՎՈՆ	1
Ռուբեն Մելքոնյան ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՈՒԾԱՑԱԾ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ԴԻԱՐԲԵՔԻՐ	5
Հայկ Գաբրիելյան ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ	8
Սուրեն Սարյան ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ	15
Սեւակ Սարուխանյան ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ	22
Մեզան Օ. Սալիվան ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ	27
Արտաշես Տեր-Հարությունյան «ԱՐԱՔԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ» ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ	32
Յու. Շչեգլովից ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԱՔԱԿԱՆ «ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՍԻՆ	37
Կոնստանտին Գորդեև ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՔԱՆԴՈՒՄ. «ՀԱՆՈՒՆ ԻՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ»	41
Գ. Նժդեհ «ՄԱՐՁԻԿԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՄԱՐՏԻԿ»	47

Շապիկին պատկերված է
Վառենցի ծովածոցը
(Վանա լիճ)

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: